

Արարատ Մ. Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր

1937 ԹՎԱԿԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Քննական դիտարկումներ քաղաքական բռնաձնշումների
80-ամյա տարելիցի առիթով*

Բանալի բառեր – բռնաձնշում, Ի. Ստալին, վախ, հար-
ցաքննություն, Ա. Խանջյան, մատնություն, դատավարություն,
բանտ, Ա. Ամատունի, դաշնակցական, հակահեղափոխական,
քննիչ, Եռյակ, գինվորական տրիբունալ, գնդակահարություն:

Մուտք

Խորհրդային-ամբողջատիրական վարչակարգի փլուզումից հետո 1990-ա-
կաններին հետխորհրդային տարածքում սկսվեց մի շարժում՝ վերանայելու
և գնահատելու նախընթաց պատմության առավել մութ, ցավոտ էջերը, որը,
սակայն, իր ավարտին չհասավ քաղաքական հանգամանքների փոփոխու-
թյան պատճառով: Բայց **գիտության բարոյականությունը** այսօր ևս պա-
հանջում է 80 տարիների հեռվից բացահայտել, քննել ու գնահատել ԽՍՀՄ-
ում, այդ թվում Խորհրդային Հայաստանում կատարված քաղաքական բռնա-
ձնշումները: Կարևոր է հատկապես 1937 թվականի՝ Մեծ տեռորը խորհրդա-
նշող քաղաքական բռնաձնշումների բարձրակետի իրական պատճառները,
կատարման մեթոդաբանությունն ու նրանում Ի. Ստալինի անձնական մեղքի
չափը պարզելու հարցը:

1. Ո՞վ էր մեղավոր

Հենց սկզբից ուզում ենք հերքել խորհրդային պատմագրությունից փո-
խանցված այն պնդումը, թե ԽՍՀՄ-ում բռնաձնշումների (ռեպրեսիաների)
քաղաքականությունը Ի. Ստալինի գործունեության հետևանքն էր: Այն, ինչը
տեղի է ունեցել խորհրդային երկրում 1920-ական թթ. մինչև 1950-ականների
սկիզբը՝ միլիոնավոր մարդկանց քաղաքական հետապնդում, բանտ-աքսոր,
գնդակահարություններ և այլն, հետագայում փորձ է արվել վերագրել
միայն խորհրդային պետության ղեկավար Ի. Ստալինին, պատճառաբանել

1977 թ. (ԺԵ) փարի, թիվ 3 (59), հայխ-սեպտեմբեր, 2017
ՎԿՎ համահայկական հանդես

*Հոդվածն ընդունվել է տպագրության 16.08.2017:

նրա անձով ու դաժան բնավորությամբ: Այդ կերպ ստացվում է, որ եթե Ստալինի փոխարեն պետության ու կուսակցության ղեկին լիներ խորհրդային մեկ ուրիշ ղեկավար, ասենք՝ Լ. Տրոցկին, Գ. Զինովևը, Ս. Կիրովը, և այլք, ապա նման մեծ աղետ չէր լինի:

Իրականում բռնությունները, ռեպրեսիաները և դասակարգային թշնամուն, սոցիալիզմի ու կոմունիզմի տեսլականներին ու քաղաքականությանը ընդդիմացողներին վերացնելու ընթացքը բխում էր ոչ թե ԽՄԿԿ առանձին ղեկավար գործիչների ցանկությունից, անձնական խառնվածքից, քնահաճույքից, այլ լենինյան ուսմունքից, բոլշևիկյան կուսակցության գաղափարական, ծրագրային հիմնադրություններից, որը նպատակ էր դրել բռնության գործադրման միջոցով քանդել հին աշխարհը և հիմնել կոմունիստական հավասարությունն ու արդարությունն ենթադրող նոր աշխարհ: Ընդ որում, դրան պետք է հասնեին ամբողջ աշխարհում (ըստ Վ. Լենինի, Լ. Տրոցկու, Գ. Զինովևի), իսկ անհնարինության դեպքում՝ գոնե մեկ առանձին վերցրած երկրում, տվյալ պարագայում՝ ԽՍՀՄ-ում (Ի. Ստալին, Ն. Բուխարին): Այս նպատակին հասնելու համար հեղափոխությունների, բռնությունների միջոցով պետք է վերացվեին բոլոր խոչընդոտները: Ահա այս կանխադրությի հիման վրա էլ հեղվեց միլիոնավոր, հիմնականում՝ անմեղ մարդկանց այրունը:

Ուստի մասնագիտական գրականության մեջ և հասարակական ընկալումներում ԽՍՀՄ-ում կատարված քաղաքական բռնաճնշումներին տրված «ստալինյան» անվանումը կարելի է ընդունել միայն պայմանականորեն, այն իմաստով, որ զանգվածային բռնությունները տեղի են ունեցել հիմնականում նրա ղեկավարման 30 տարիների ընթացքում: Սակայն դրանց կրողն ու պատասխանատուն միայն Ստալինը չէր, որովհետև ռեպրեսիաների քաղաքականությունը գործնականում սկիզբ է առել 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջման առաջին իսկ օրերից, երբ Վ. Լենինի և բոլշևիկ մյուս առաջնորդների կողմից առաջ քաշված **պրոլետարիատի դիկտատուրայի** հիմնադրությոթը իշխանության գրավումով սկսեց փոխակերպվել կուսակցության և նրա առաջնորդի **անձնական դիկտատուրայի**: Իսկ ՌԿ(բ)Կ 10-րդ համագումարին (1921 թ. մարտ) տրված իր հաշվետու զեկուցման եզրափակիչ մասում Վ. Լենինը վերահաստատեց Կոմինտերնի 2-րդ կոնգրեսում արտահայտած այն միտքը, որ «Պրոլետարիատի դիկտատուրան հնարավոր է միայն կոմունիստական կուսակցության միջոցով և ոչ այլ կերպ»¹:

Պրոլետարիատի դիկտատուրայի ծրագրային պլատֆորմով հանդես եկող բոլշևիկյան կուսակցությունն առաջնորդվում էր **հեղափոխական բարոյականությամբ**, որն ինքնին ենթադրում էր ամենից առաջ ուժի գործադրում, բռնություն: «Մենք ուզում ենք, - գրում էր Վ. Լենինը 1917 թ. նոյեմբերին, - կազմակերպել բռնություն հանուն աշխատավորության շահերի»²: Իսկ քիչ անց ԺԿԽ-ի նախագահ Վ. Լենինն իր տեղակալ Լ. Կամենևին հասցեագրած 1922 թ. մարտի 3-ի նամակում ակնարկում էր. «Մեծագույն սխալ է կարծելը, թե ՆԷՊ-ը վերջ տվեց տեռորին: Մենք դեռ կվերա-

1 **Լենին Վ. Ի.**, Երկերի լիակատար ժողովածու (այսուհետ՝ ԵԼԺ), հատ. 43, Եր., 1982, էջ 50:

2 **Լենին Վ. Ի.**, ԵԼԺ, հատ. 35, Եր., 1981, էջ 128:

դառնանք տեռորին...»³: Քաղաքացիական պատերազմի ավարտից հետո քաղաքական բռնաճնշումները տարբեր հաճախականությամբ ու փուլերով շարունակվել են մինչև 1950-ական թվականների սկիզբը, մինչև Ի. Ստալինի մահը: Ստալինի ղեկավարման շրջանում դրանք մեծ ծավալներ ընդունեցին, որովհետև հենց այդ տարիները համընկան սոցիալիզմի կառուցման Լենին-ստալինյան ծրագրի գործադրման հետ, որը պահանջում էր թշնամական համարվող բոլոր տարրերի վերացում: Իսկ այդպիսի տարրեր էին համարվում հակահեղափոխականները, տրոցկիստները, դաշնակցականները, կուլակները և այլն: Ուստի բոլշևիկների պատկերացրած սոցիալիզմի կառուցումից հետո ռեպրեսիաների թափը պետք է թուլանար, ինչը և տեղի ունեցավ Ստալինից հետո:

Պատմության մեջ հայտնի խրուշչովյան այսպես կոչված «հալոցքի» կամ «ձնհալի» ժամանակներից խորհրդային երկրում փոխվեցին քաղաքական հետապնդումների ու հալածանքների ձևերն ու մեթոդները. դրանք դարձան ավելի քողարկված, առաջ եկավ այլախոհություն, հետապնդվում ու հալածվում էին հայրենասեր ու համարձակ առանձին մտավորականներ, ինչը շարունակվեց մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը և ամբողջատիրական (տոտալիտար) համակարգի վախճանը:

Ինչպես վերը նշվեց, եթե Ստալինը չլիներ պետության և կուսակցության ղեկին, միևնույն է, խորհրդային-կոմունիստական բռնաճնշիչ վարչակարգի քաղաքականությունը ավելի կամ պակաս չափով կիրականացնեին մյուսները: Ստալինը պարզապես ամենահարմարը եղավ առանց միջոցների առաջ խտրականություն դնելու, ուժով ու բռնությամբ «սոցիալիստական հասարակարգի» հաղթանակն ապահովելու գործում:

Հարկ է նշել, որ բռնաճնշումների ու անհատի պաշտամունքի առաջացման սոցիալ-մշակութային նախադրյալներից էին խորհրդային հասարակության քաղաքական գիտակցության ու մշակույթի ցածր մակարդակը, հասարակության մեջ և ՀամԿ(բ)Կ-ԽՄԿԿ ներսում ժողովրդավարության չգոյությունը, իսկ ավելի խորքում՝ Ռուսաստանի պատմական անցյալի ավանդույթները:

Ինչ վերաբերում է բռնաճնշումներին Խորհրդային Հայաստանի և նրա ղեկավար դեմքերի անմիջական մասնակցությանը, ապա նրանք կուսակցության ծրագրային ու կանոնադրական սկզբունքների խստիվ պահպանմամբ անվերապահորեն եղել են Կենտրոնի՝ ՌԿ(բ)Կ-ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ու Քաղբյուրոյի իջեցրած որոշումների ու հանձնարարականների անմիջական կատարողները: Դրանցից փոքր-ինչ շեղումի և անգամ վերև գնացող կեղծ բողոքների, մատնությունների, զրպարտագրերի և այլնի առկայության դեպքում նրանք հատուցում էին իրենց կյանքով: Այդուհանդերձ, Խորհրդային Հայաստանի ղեկավար դեմքերը ևս, ըստ զբաղեցրած դիրքի ու ժամանակի, կրում են պատասխանատվության իրենց մասնաբաժինը: Եվ ամենևին էլ արդարացում չէ, թե «ժամանակներն էին այդպիսին»:

3 Հղումը ըստ՝ «Отечественная история», М., 2006, N 1, էջ 85:

2. Քաղաքական բռնաճնշումների պատմական ակունքները

Պատահական չպետք է համարել խորհրդային-կոմունիստական վարչակարգի հաստատումը նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքում, որովհետև այդ երկրի պատմական զարգացման յուրահատուկ ընթացքն իր դրոշմն է թողել ինքնակալական Ռուսաստանի իրավահաջորդ լենին-ստալինյան վարչակարգի բռնատիրական բնույթի վրա⁴:

Դեռևս 18-րդ դարի ֆրանսիացի նշանավոր լուսավորիչ-փիլիսոփա Շարլ Մոնտեսքյոն ռուսական ինքնակալության ծագումը բացատրում էր ցուրտ կլիմայի և հսկայածավալ տարածքների առկայության պայմաններում խիստ կենտրոնացված կառավարման հանգամանքով⁵: Ռուսաստանի քաղաքական պատմության ամենաբնորոշ կողմերից մեկը ցարական ինքնակալության, կարելի է ասել, ասիական, կիսամոնղոլ-թաթարական վարչակարգի առկայությունն էր: Ինքնակալական համակարգը պաշտոնապես ներկայացվել է որպես Ռուսաստանի կառավարման միակ ձև ու քաղաքական արժեք: Ռուսաստանի ինքնակալական համակարգի գաղափարախոսներից մեկը՝ լուսավորության նախարար կոմս Սերգեյ Ուվարովը, 1833 թ. նոյեմբերին կայսր Նիկոլայ I-ին ուղղված գեկուցագրում զարգացնում էր այն միտքը, որ «**ինքնակալությունը** (ընդգծումը հեղինակինն է - Ա. Հ.) Ռուսաստանի քաղաքական գոյության գլխավոր պայմանն է»⁶ և «Ռուսաստանի յուրահատկությունն այն է, որ ինքնակալությունը համարվում է նրա կառավարման միակ հնարավոր ձևը»⁷:

Դարերի ընթացքում ռուս հասարակայնության սոցիալական տարբեր խմբեր ու խավեր ընտելացել էին այդ համակարգին՝ այն ընկալելով **իբրև բնական վիճակ**: Նման պայմաններում ռուսական ցարերը երկիրը համարել են իրենց **սեփականությունը**՝ «ուղել», «վոտչինա» կամ կալվածք: Պատմությունից հայտնի է, որ նրանք ոչ թե կառավարել են երկիրը, այլ տիրել, իշխել են որպես ժառանգական «ուղելային» կալվածք⁸: Ավելին, ռուսական սոցիալ-դեմոկրատիայի հիմնադիր Գ. Վ. Պլեխանովի խոսքերով ասած՝ «... հողը հողագործների հետ միասին ամրացվեց պետությանը և դրա հիման վրա էլ զարգացավ **ռուսական դեսպոտիզմը** (ընդգծումը մերն է - Ա. Հ.)»⁹: Ուստի խոսելով ցարական ինքնակալության դերի մասին՝ փիլիսոփա Անդրեյ Մեդուշևսկին եզրահանգում է. «...միապետությունը Ռուսաստանում եղել է ոչ միայն խորհրդանիշ, այլև իշխանության իրական կրող»¹⁰:

Խորհրդային ժամանակաշրջանում հողը, արտադրության մյուս միջոցները, ազգային հարստությունը պետականացնելու և տիրելով «ուղելային կալվածք»-ի վերածելու ավանդույթը հեշտությամբ ընդօրինակվեց խորհրդա-

4 Спін Политическая история Российского государства, под ред. **Мунчаева Ш. М.**, М., 1998, էջ 25; Политические партии России, под ред. проф. **Завелева А. И.** и др., М., 2000, էջ 484; История России XX век (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009, էջ 897, 899 и др:

5 Спін **Монтескье Ш.**, Избранные произведения, М., 1955, էջ 40:

6 Մեքերումը ըստ՝ Хрестоматия по истории России, М., 2009, էջ 245:

7 Նույն տեղում, էջ 231:

8 Спін Политическая история Российского государства, под ред. **Ш. М. Мунчаева**, М., 1998, էջ 19:

9 Четвертый (Объединительный) съезд Р.С.Д.Р.П., М., 1934, с. 61.

10 **Медушевский А. Н.**, Причины крушения демократической республики в России 1917 года, «Отечественная история», М., 2007, N 6, с. 24.

յին-բոլշևիկյան վարչակարգի կողմից: Ինչպես ցարիզմի, այնպես էլ կոմունիստական ամբողջատիրության օրոք իշխանությանն ամեն ինչ թույլատրելի էր, երկու դեպքում էլ պետական մեքենան կոպտորեն միջամտում էր հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտներին: Ավելին, խորհրդային պետությունում բավականին տևական ժամանակ (1930-1950-ական թվականների սկիզբը) կոլտնտեսականներն անգամ անձնագիր չեն ունեցել, այլ խոսքով՝ գործնականում գրկված են եղել տեղաշարժի հնարավորությունից ու մինչեֆորմյան Ռուսաստանի բազմամիլիոն ճորտերի նման ըստ էության ամրացվել էին հողին: Ցարականից շատ ավելի դաժան է եղել կուսակցական-պետական բռնաճնշիչ մեքենան: Ռուսաստանում մարդը համարվել է պետական մեքենայի մի պտուտակը: Մարդու իրավունքների վիճակը, փաստորեն, գործնականում այդպես մնաց նաև խորհրդային համակարգում: Ընշումների ու բռնությունների իրականացման ոչ պակաս կարևոր նախադրյալներից էր կրթական ցածր մակարդակը, որը ևս հատկանշական էր Ռուսաստանի համար:

Այս իմաստով՝ Լենինը, Ստալինը, Տրոցկին, Բուխարինը և բոլշևիկ մյուս առաջնորդները լավ հասկանում էին, թե ինչ է հարկավոր ռուս հանրությանը: Դրա համար էլ վերականգնեցին նախկին կայսրությունը նոր՝ «ԽՍՀՄ» անվանումով: Սրանք գաղափարներ ու կարգախոսներ էին, որոնք արտահայտում էին «վելիկոուս» ժողովրդի մեծապետական ձգտումները: Հայտնի է, որ ռուս գյուղացին պաշտամունք է ունեցել ցարի հանդեպ: Ռուսաստանի պատմությունից կարելի է բազմաթիվ ցարեր ու թագաժառանգներ մատնանշել, որոնք սրբացվել են: Այլ կերպափոխմամբ՝ պաշտամունքի այդ երևույթը պետք է փոխանցվեր խորհրդային պետության ղեկավարներին՝ Վ. Լենինին, Ի. Ստալինին և կոմունիստական կուսակցության մյուս առաջնորդներին, մանավանդ որ նրանք կարողացան ապահովել խորհրդային պետության ծավալապաշտական նկրտումներն ու գերիզորությունն ամբողջ աշխարհում: Վերը բերվածից հետևում է, որ ռուսական ցարերը և Լենին-Ստալին զույգը ռուս ժողովրդի հոգում ու գիտակցության մեջ ըստ էության նույնականացվում էին:

Վարչակարգը, որը Ռուսաստանում ստեղծվեց խորհրդային իշխանության ձևով, պարտադրվեց բոլոր այն երկրներին, այդ թվում նաև Հայաստանին, որոնցում հաստատվեցին խորհրդային կարգերն ու կոմունիստական կուսակցության մենատիրական համակարգը, ուստիև գործադրվեց այն նույն բռնաճնշումների քաղաքականությունը, որը վարում էր բոլշևիկյան կուսակցությունը իր գաղափարախոսությանն ու ծրագրային հիմնադրույթներին համապատասխան:

3. Հիմնահարցի հասարակական ընկալումները

Նախ փորձենք ներկայացնել մի քանի թվական տվյալներ խորհրդային երկրում գործադրված քաղաքական բռնաճնշումների (հետապնդում, ձերբակալություն, նախնական կալանք, հարցաքննություններ, ավելի հաճախ՝ ձևական դատավարություն, բանտ-աքսոր՝ ընդհուպ մինչև գնդակահարություն) վերաբերյալ: Մինչև այժմ չկան համահավասար ու վստահություն

ներշնչող տեղեկություններ ինչպես ԽՍՀՄ-ում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում տարբեր ձևերով բռնաճնշումների ենթարկվածների թվաքանակի վերաբերյալ: Այն ամենը, ինչը հրապարակի վրա է, պարզապես մոտավոր տվյալներ են:

Նախկինում բռնաճնշումների թեմայով ուսումնասիրություն կատարելն անհնար էր, որովհետև քաղաքական և այլ նկատառումներով արխիվների համապատասխան ֆոնդերը անհասանելի կամ պարզապես փակ էին: Վերջին մեկ-երկու տասնամյակում բացված ու գաղտնագերծված արխիվներում աշխատելու դժվարություններից մեկն այն է, որ բռնադատվածների վերաբերյալ եղած նյութերը գտնվել են Արտակարգ հանձնաժողովի (Չեկա), ՊԶՎ-ի, ՆԳԺԿ-ի, Գերագույն դատարանի և այլ գերատեսչությունների գործերում: Դրանք ցրված են ըստ ձեռքակալության, հարցաքննությունների, դատավարության, բանտարկության, աքսորի ու գնդակահարության վերաբերյալ վճիռների, որովհետև տեղի են ունեցել բանտարկյալների ու աքսորյալների շարունակական տեղաշարժեր: Կան մեղադրական գործեր, որոնք կազմվել են մի գերատեսչությունում, սակայն դատավարությունն ու դատավճիռը կայացվել են ոչ միայն այլ գերատեսչությունում, այլև Մոսկվայում կամ այլ հանրապետությունում: Բացի այդ՝ մեղադրական եզրակացություններում ու դատավճիռներում հստակ սահմանազատում չկա՝ արդյոք տվյալ դատապարտյալը քաղաքական հողվածներով է դատված, թե՛, ասենք, լրտեսության, պետական սահմանի խախտման, բանդիտիզմի (ավագակության), որովհետև աքսորավայրերում քաղաքական և քրեական կալանավորները չեն տարբերակվել: Չեն բացառվում նաև դեպքեր, երբ առանց ձեռքակալությունների ու մեղադրանք ներկայացնելու՝ հանցանքի վայրում կամ պարզապես փողոցում կատարվել են մարդկանց գնդակահարություններ: Այդպիսի գործողությունների ավելի հաճախակի դիմել է խորհրդային չեկան: Այս ամենը նշանակում է, որ շատ դժվար կլինի ճիշտ հաշվարկել ու ստույգ տվյալներ հրապարակել քաղաքական բռնաճնշումների ծավալների վերաբերյալ:

Այդուհանդերձ, ներկայացնենք գիտական ու հասարակական շրջանակներում արդեն քաղաքացիություն ստացած տվյալներն ու գնահատականները: Այսպես՝ հետխորհրդային շրջանի ռուսական գրականության մեջ 1930-ական թթ. ստալինյան բռնաճնշումների ենթարկվածների թվաքանակը նշվում է 6-7 մլն. մարդ¹¹: Մեկ այլ հեղինակի հաշվարկներով՝ միայն 1936-1939 թթ. խորհրդային երկրում ձեռքակալվել է ոչ պակաս քան 7-8 մլն. մարդ, որից մոտ 3 մլն.-ը գնդակահարվել է կամ մահացել է անմարդկային վերաբերմունքից¹²:

Խոսելով 1930-ական թթ. զանգվածային բռնաճնշումների մասին՝ չպետք է անտեսել, որ ռեպրեսիոն մեքենան գործել է նաև ողջ 1920-ական թվականներին, երբ դեռ ստալինյան մենատիրությունը չէր հաստատվել: Այսպես՝ 1921-1929 թթ. ընթացքում ԽՍՀՄ-ում որպես «հակահեղափոխական»՝ քաղաքական դրդապատճառներով դատապարտվել է 600 հազար

11 Стів История России, под ред. М. Шумилова, С. Рябкина, СПб, 1997, էջ 371:

12 Стів Коэн С., Бухарин и большевистская революция: Политическая биография (1888-1938), Нью-Йорк, 1980, էջ 353:

մարդ¹³: Այդ նույն 1920-ական թվականների ընթացքում՝ 1922-1928 թթ., Չեկա-ՄՊԲՎ-ՆԳԺԿ կողմից քաղաքական բռնաճնշումների արդյունքում գնդակահարվել է 11271 մարդ¹⁴: Արդեն ռեպրեսիաների բարձրակետի շրջանում՝ 1937 թ. հուլիս -1938 թ. հատվածում (մեկուկես տարում), պաշտոնական տվյալներով՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ Ն. Եժովի հրամանով ձերբակալվել է ավելի քան 1,5 մլն. մարդ, որից 682 հազարը գնդակահարվել է¹⁵: Մեկ այլ տվյալով՝ 1930-1953 թթ. հակահեղափոխական գործունեության և պետական հանցագործությունների մեղադրանքով դատավճիռներ են կայացվել մոտ 4 մլն. մարդու նկատմամբ¹⁶: Դարձյալ պաշտոնական տվյալներով՝ 1929-1953 թթ. զուտ «հակահեղափոխական» մեղադրանքով գնդակահարվել է 883 հազար մարդ և այլն¹⁷:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա մեզանում քաղաքական բռնաճնշումների հարցով մասնագետ Ա. Մանուկյանի կատարած հաշվարկներով՝ 1920-1953 թթ. ժամանակահատվածում հանրապետությունում քաղաքական բռնաճնշումների է ենթարկվել մոտ 42 հազար մարդ¹⁸: Սա, ինչ խոսք, բավականին մեծ թիվ էր ՀՍԽՀ ընդամենը 1-1,5 մլն. բնակչության պարագայում: Հեղինակի հաշվարկներով՝ 1930-ական թվականներին, այդ թվում՝ բռնաճնշումների բարձրակետը համարվող 1937-1938 թթ., բռնադատվել է 18 հազար մարդ¹⁹: Ա. Մանուկյանի տվյալներով՝ միայն 1937-1938 թթ. Հայաստանում բռնությունների ենթարկված 8104 մարդուց 4530-ը գնդակահարվել է²⁰:

Պատահական չպետք է համարել, որ «սոցիալիզմի հիմքերի կառուցման» այդ ժամանակահատվածն է ընդունվում որպես բռնաճնշումների բարձրակետ, որովհետև դրան նախորդած 1920-ական թվականներին ՀՀ ԱԱՆ արխիվի տվյալներով՝ Հայաստանում քաղաքական դրդապատճառներով տարբեր պատժաչափերով դատապարտվել է 1246 մարդ²¹: Հայտնի է, որ քաղաքական բռնաճնշումներ տեղի են ունեցել նաև 1940-ական թվականներին և հետագայում, այսինքն՝ դրանք կրել են շարունակական բնույթ²²:

Մեր օրերում քաղաքական բռնաճնշումների պատմության վերհանումն ու գնահատումը ոչ միայն զուտ պատմագիտական, այլ նաև քաղաքական կարևորության հարց է: Սա խորհրդային-կոմունիստական 70-ամյա վարչակարգի օրինականության, բարոյականության ու քաղաքական մշակույթի չափման ու գնահատման ցուցիչն է:

Մինչև Ստալինի մահը՝ 1953 թ. մարտ, բռնաճնշումների թեման եղել է փակ թե՛ գիտական և թե՛ հասարակական շրջանակներում, էլ չենք խոսում՝

13 Տե՛ս История России XX век. (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009, էջ 819:

14 Տե՛ս История КПСС, отв. ред. **Безбородв А. Б.**, М., 2014, էջ 235:

15 Տե՛ս История России XX век. (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009, էջ 965:

16 Տե՛ս История Отечества. Краткий очерк, вып. 2, М., 1992, էջ 18:

17 Տե՛ս История России XX век. (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009, էջ 966:

18 Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական բռնաճնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999, էջ 7 և 239:

19 Տե՛ս **Մանուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 19, 25 և 239:

20 Տե՛ս **Մանուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 38: Մեկ այլ հետազոտողի՝ պրոֆ. Վլ. Ղազախեցյանի տվյալներով երկու տարվա բռնաճնշվածների թիվը նշված է 8084 մարդ, տե՛ս **Ղազախեցյան Վլ.**, 1937-ը Հայաստանում, Եր., 2004, էջ 49:

21 Տե՛ս **Մանուկյան Ա.**, նշվ. աշխ., էջ 12:

22 Այդ մասին տե՛ս **Վիրաթյան Ա.**, Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Եր., 2001:

քննարկումների, հասարակական արձարծումների, գիտական, հուշագրական ժողովածուների ու նյութերի հրատարակությունների մասին: Ստալինյան կոչված բռնաճնշումների թեման բարձրացվեց ԽՄԿԿ 20-րդ համագումարից հետո ԿԿ-ի առաջին քարտուղար Նիկիտա Խրուշչովի կողմից փակ նիստում տրված զեկուցման հիման վրա: Նա հանդես եկավ Ստալինի անձի պաշտամունքի խիստ քննադատությամբ և 1956 թ. հունիսի 30-ին ԿԿ-ն ընդունեց համապատասխան որոշում դրա հետևանքների վերացման մասին: Կապված անհատի պաշտամունքի քննադատության հետ՝ եղան առանձին հրապարակումներ հանդեսներում ու մամուլում: Բայց քանի որ քննադատությունը միակողմանի էր, քաղաքական բռնությունների ողջ մեղքը փաստորեն ամբողջությամբ բարդվում էր Ստալինի վրա:

1960-1980-ական թվականներին՝ այսպես կոչված լճացման տարիներին, հավանաբար պետության դեկը ստանձնած պահպանողական ուժերի հրահանգով, ռեպրեսիաների խնդրի արձարծումները կարելի է ասել մոռացության մատնվեցին. այդ մասին այլևս չէր խոսվում, չկար հանրային հետաքրքրություն: Ավելին, այդ շրջանում պատմականակցական գրականության ու խորհրդային հասարակության մեջ տեղ-տեղ սկսել էին վերակենդանացնել ու երբեմն դրական կողմերով ներկայացնել Ստալինի անձն ու գործը:

Այլ վիճակ ստեղծվեց ԽՍՀՄ փլուզման ու ԽՄԿԿ ամբողջատիրության վերացման փուլում՝ 1990-ական թվականներին: Ելցինյան ժողովրդավարացման գործընթացների ժամանակաշրջանում խորհրդային տարածքում ուժեղ շարժում ծավալվեց խորհրդային բռնապետական վարչակարգի զանգվածային բռնաճնշումների վերհանման ուղղությամբ: Հրատարակվեցին մի շարք հայտնի պատմաբանների, քաղաքագետների, փիլիսոփաների աշխատություններ, գաղտնագերծված արխիվային ֆոնդերից կազմված փաստաթղթերի և նյութերի ժողովածուներ, որոնք նոր լույս սփռեցին կուսակցական-պետական մարմինների կողմից իրականացված զանգվածային բռնությունների և առհասարակ, պատմության այսպես կոչված՝ «սև» և «սպիտակ» էջերի վրա²³:

Ի տարբերություն Ռուսաստանի՝ մեզանում արձագանքը բռնաճնշում-

23 Տե՛ս **Орлов А.**, Тайная история сталинских преступлений, Нью-Йорк, 1983; Режим личной власти Сталина: К истории формирования, под ред. **Кукушкин Ю. С.**, М., 1989; **Волгоносов Д.**, Триумф и трагедия: Политический портрет И. В. Сталина, в 2 кн. М., 1990; **Медведев Р.**, О Сталине и сталинизме, М., 1990; **Такер Р.**, Сталин, путь к власти, М., 1990; Берия: конец карьеры, сост. и ред. **Некрасов В. Ф.**, М., 1991; Сталинское Политбюро в 30-е годы: сб. док., М., 1995; **Хлевнюк О. В.**, Политбюро: Механизмы политической власти в 1930-е гг. М., 1996; **Агабеков Г. С.**, Секретный террор: Записка разведчика, М., 1996; **Мунчаев Ш. М., Устинов В. М.**, История России, М., 1997; Без грифа «Секретно», авт. сост. **Кузнецов И. Н.**, Минск, 1997; **Стецовский Ю.**, История советских репрессий, т. 1, М., 1997; История России, под ред. **Шумилов М. М., Рябикин С. П.**, СПб., 1997; Лубянка: ВЧК-ОГПУ-НКВД-НКГБ-МКБ-КГБ, 1917-1960; Справочник, под общ. ред. **Яковлев А. Н.**, М., 1997; Архивы Кремля, кн. 1, 1922-1925 гг., Новосибирск, 1998, Экономика ГУЛАГ и ее роль в развитии страны, 1930-е годы: Сборник документов, саст. **Хлусов М. И.**, под ред. **Дмитренко В. П.**, М., 1998; **Брюханов Б. Б., Шошков Е. Н.**, Оправданию не подлежит: Ежов и ежовщина, 1936-1938 гг., СПб., 1998; Год 1937: Сборник документов и материалов, авт. ред. **Тренин Б. П.** и др., Томск, 1998; «Совершенно секретно»: Лубянка-Сталину о положении в стране (1922-1934 гг.), т. 1, ч. 1, М., 2001, т. 2, ч. 1, М., 2001, т. 7, М., 2004, т. 8, ч. 1, М., 2008, **Голиков Д.**, Тайные операции ВЧК, М., 2008; История России XX век (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009 և այլն.

ների թեմային անհամեմատ թույլ էր, և այդ ուղղությամբ հատուկ գիտական ուսումնասիրությունները մինչ օրս մատների վրա կարելի է հաշվել²⁴: Պետական մակարդակով ուշադրությունն այնքան փոքր էր, որ նմանաբնույթ հետազոտությունները կատարվում էին առանձին անհատների, հասարակական կազմակերպությունների, օտարերկրյա հիմնադրամների օժանդակությամբ կամ էլ այս կամ այն բռնադատվածի ժառանգի անձնական նախաձեռնությամբ:

Ճիշտ է նկատում վերջերս լույս տեսած ստալինյան բռնաճշումների պատմությանը նվիրված հատորյակի համահեղինակներից ազգագրագետ Հրանուշ Խառատյանը, որ բացի այն, որ քիչ են հետազոտությունները, «դրանց նկատմամբ մեզանում չկա նաև հանրային և քաղաքական հետաքրքրվածություն»²⁵: Մեր կարծիքով՝ դա կարելի է բացատրել մի քանի հանգամանքով:

Ա) Հայաստանի անկախացումից հետո մինչ օրս մեր որոշ շրջանակներում մի տեսակ կարոտախտ կա խորհրդային ժամանակաշրջանի սոցիալ-տնտեսական համեմատաբար ապահով կյանքի ու պայմանների հանդեպ: Նման մտածելակերպի համար հատկապես մեծ խթան հանդիսացան Հայաստանի անկախության առաջին տարիների դժվարությունները՝ Սպիտակի երկրաշարժը, սոցիալ-տնտեսական ծանր պայմանները, պատերազմը, շրջափակումը, մենաշնորհները, կոռուպցիան, գործազրկությունը, արտագաղթը և այլն: Այս բոլոր բացասական գումարելիները հնին՝ խորհրդային ժամանակներին, անգամ ստալինյան «կարգուկանոնին» վերադարձի ցանկություն էին առաջացնում:

Բ) Բռնաճշումների պատմության հանդեպ հետաքրքրության պակասը պետք է բացատրել նաև հասարակության սերնդափոխությամբ, արդեն 2-3 սերունդ էր փոխվել և եթե հաշվի առնենք անհրաժեշտ գրականության ու տեղեկատվության պակասը, ապա պարզ է դառնում, որ շատերը չգիտեն, իսկ համեմատաբար տարիքավորները արդեն մոռացել կամ աղոտ գիտեն բռնաճշումների մասին: Բացի այդ՝ հայ հասարակության բավականին լայն շերտերում շարունակում է իշխող մնալ խորհրդային շրջանի մտածելակերպն ու գործելակերպը, ուստի՝ մշակույթը: Այս կապակցությամբ դարձյալ տեղին է նկատում ազգագրագետ Հ. Խառատյանը, որ «ՀՀ քաղաքացիների ներկայիս հանրային մշակույթը մեծ հաշվով խորհրդային շրջանի մշակույթի շարունակությունն է»²⁶:

Այսպիսով, երբ 1990-ական թթ. «ստալինյան» կոչված ռեպրեսիաների թեմաներով Ռուսաստանում մեծաթիվ մենագրություններ ու ժողովածուներ էին լույս տեսնում, որոնք մերկացնում էին խորհրդային բռնապետներ Վ. Լենինին, Ի. Ստալինին և մյուսներին, Հայաստանում կարելի է ասել

24 Տե՛ս Ստեփանյանց Սո., Հայ առաքելական եկեղեցին ստալինյան բռնապետության օրոք, Եր., 1993, Գասպարյան Գ., Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994, Մանուկյան Ա., Հայ առաքելական եկեղեցու բռնադատված հոգևորականները 1930-1938, Եր., 1997, նույնի՝ Քաղաքական բռնաճշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999, նույնի՝ Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., 2002, Վիրաբյան Ա. Ս., Հայաստանը Ստալինից մինչև Խրուշչով, Եր., 2001, Ղազախեցյան Վլ., 1937-ը Հայաստանում, Եր., 2004: Ստալինյան բռնաճշումները Հայաստանում. Պատմություն, հիշողություն, առօրյա, Խառատյան Հ. և ուրիշներ, Եր., 2015 և այլն:

25 Ստալինյան բռնաճշումները Հայաստանում, Եր., 2015, էջ 11:

26 Նույն տեղում, էջ 13:

վախվորած, մեղմ ու զգուշավոր էին արձագանքում դրան: ՀՀ աշխարհաքաղաքական աննպաստ իրավիճակի և Հայաստանի ու Արցախի անվտանգությունը Ռուսաստանի հետ կապելու հանգամանքով պայմանավորված՝ թե՛ Հայաստանի իշխանությունները, թե՛ մտավորականությունը և թե՛ հայ հանրությունը՝ իր ճնշող մեծամասնությամբ, Ռուսաստանի հանդեպ վերաբերմունքի ու դիրքորոշման հարցում ցուցաբերում էին այնքան զգուշավոր վարքագիծ, որ խորհրդային երկրի պատմության, անգամ ստալինյան շրջանի բռնությունների և այլ բացասական երևույթների մասին հանկարծ խիստ ձևով չարտահայտվեն ու «չնեղացնեն» Հայաստանի ու հայ ժողովրդի «անվտանգության երաշխավորին»: Այլ խոսքով՝ ԽՍՀՄ-ում կատարված քաղաքական բռնաճնշումների թեմայի պատմագիտական ու հասարակական արծարծումները մեզանում մեծ չափով պայմանավորված են եղել քաղաքական հանգամանքով:

Վերջին մեկուկես տասնամյակում՝ Բ. Ելցինին հաջորդած Վ. Պուտինի վարչակարգի շրջանում, դժվար չէ նկատել, որ պաշտոնական, ուստի և հասարակական մակարդակով Ռուսաստանում կտրուկ սահմանափակվել է խորհրդային ու ստալինյան շրջանի քննադատության տարափը, էլ չենք խոսում՝ Հայաստանի մասին: Նոր պայմաններում Ռուսաստանի բարձրագույն իշխանությունների լուռ համաձայնությամբ ու գիտությամբ կարծես կրկին վերականգնվում են խորհրդային արժեքային համակարգի շատ տարրեր: Երկրում կրկին արմատավորվում է մենիշխանական, միակուսակցական ավտորիտար համակարգը և իբրև դառը դաս՝ մոռացության են մատնվում նրա պատմության տխուր էջերը, հիշվում ու փառաբանվում է միայն խորհրդային հսկա կայսրությունը, նրա անխորտակելի ռազմուժը, խորհրդային շրջանի օրինեքը և այլն: Այդ տեսակետից ՀՀ-ն, նրա ղեկավարությունը՝ որպես խորհրդային ժամանակների մտածելակերպի, գործելակերպի, քաղաքական ու հոգևոր մշակույթի կրող, շատ կողմերով նմանակում է Ռուսաստանին:

Ռուսաստանից քաղաքական կախվածության մի նոր օրինակ եղավ այն, որ ՀՀ ղեկավարությունը կտրուկ հրաժարվեց Եվրամիության հետ ասոցացման համաձայնագրից և անդամակցեց ԵՏՄ-ին: Այս համատեքստում, բնականաբար, պետք է նաև սահմանափակվեր ու լռության մատնվեր խորհրդային-ստալինյան բռնաճնշումների թեման:

Ներկայումս ՌԴ օրինակով՝ բռնաճնշումներին մասնակից նախկին քաղաքական ղեկավար գործիչների հանդեպ մեզանում շարունակվում է պահպանվել լույս, դրական վերաբերմունք, լույս են տեսնում աշխատություններ, ժողովածուներ՝ նվիրված Գր. Հարությունյանին (Արութինով), Ար. Երզնկյանին և ուրիշների²⁷, Երևանի կենտրոնում քաղաքային իշխանությունների որոշմամբ կանգնեցվում է բռնաճնշումներում իր մասնաբաժինն ունեցած Ա. Միկոյանի արձանը, իսկ Գ. Նժդեհի անունը կրող հրապարակում շարունակում է կանգուն մնալ բոլշևիկ Ս. Սպանդարյանի արձանը:

Այս ամենը վկայում է, որ մեր առանձին հասարակաշերտերի համոզ-

27 Տե՛ս Գրիգոր Հարությունյան, կյանքը և գործունեությունը, Եր., 2000: Գրիգոր Շինարար, հուշեր, կազմեց Նամի Միկոյան, Եր., 2016: Արամայիս Երզնկյան. Դեմք՝ լեզնեղ, կազմեց Երզնկյան Ա. Լ., Եր., 2012 և ուրիշներ:

մունքով, իսկ իշխանական շրջանակներում՝ քաղաքական նպատակահարմարության թելադրանքով, շարունակում են պահպանվել խորհրդային արժեքային համակարգի շատ տարրեր: Ցավոք, շատերի մեջ՝ ՌԴ-ում շատ բարձր, ՀՀ-ում՝ մի փոքր նվազ, պահպանվում է ակնածանքը «ժողովուրդների հայր» Ստալինի, նրա անձի ու գործի նկատմամբ:

4. Վախի մթնոլորտը և մատնությունների մեխանիզմը

Խորհրդային կուսակցական-պետական մարմինները, առաջնորդվելով լենինյան գաղափարներով և սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման կարգախոսներով, 1930-ական թվականներին երկրում ստեղծեցին մի այնպիսի անվստահության, կասկածի, իրար մատնելու, թշնամիներ ու լրտեսներ որոնելու մթնոլորտ, որպեսզի յուրաքանչյուր ոք հետևի և տեղեկություններ հայտնի ընդհատակում գործող «ժողովրդի թշնամիների», հակախորհրդային ու հակահեղափոխական տարրերի, խմբերի ու կազմակերպությունների մասին՝ դրանց բացահայտելու, մերկացնելու և դատապարտելու համար: Այսպես ծավալվեց լայն մարդաորսը, որի արդյունքում էլ բռնություններն ու բռնաձնշումները ընդունեցին նման մեծ մասշտաբներ:

Մեզանում՝ դյուրահավատ մարդկանց շրջանակներում, և նույնիսկ գրականության մեջ, նախկինում շրջանառվել է մի թյուր տեսակետ, թե իբր Ստալինը տեղյակ չի եղել նման բռնաձնշումներին: Իսկապես, մինչ օրս էլ որոշ գեղջկական մակարդակի անհեռատեսներ տեսակետ են հայտնում, որ այս կամ այն գյուղում, քաղաքում կատարված անօրինության համար Ստալինն ինչ մեղք ուներ, նա ինչ իմանար, թե ինչ է կատարվում: Իսկ իր ժամանակին միամտությունն այն աստիճանի է եղել, որ Ա. Բակունցի հայտնի ստեղծագործության մոտիվներով՝ մարդիկ կարծել են, որ եթե Ստալինը տեղյակ լինի իր հարազատի անօրինական ձերբակալության կամ բանտարկության մասին, ապա նա իսկույն կօգնի, կազատի: Նույն կերպ էլ անհիմն ձերբակալվածն է մտածել: Պարզունակ և նույնիսկ ծիծաղելի է այն բացատրությունը, երբ նախկին բռնադատվածը կամ նրա հարազատ-բարեկամը իր կամ իր ազգականի հանդեպ կատարվածի հիմնական մեղավոր էր համարում իրեն մատնող անձին՝ հարևանին կամ կոլխոզի նախագահին, բայց միայն թե ոչ խորհրդային-կոմունիստական համակարգը: Ավելին, մարդկանց մի խումբ էլ ոչ միայն Ստալինի և նրա վարչակարգի մեղավորությունը չէր տեսնում, այլև «ժողովուրդների հոր» հանդեպ ուներ մի տեսակ ակնածանք ու պաշտամունք, որը տեղ-տեղ դրսևորվում է մինչև իսկ մեր օրերում:

Այդ պատճառով իր ժամանակին հաճախ դեպի Կենտրոն՝ Ստալինի անունով հետևել են հսկայական քանակությամբ նամակ-խնդրագրեր: Մինչդեռ երկրում տիրող վիճակի մասին պետանվտանգության մարմինների միջոցով և այլ աղբյուրներով ամեն տեսակի տեղեկատվություն էր ուղարկվում Կենտրոն և անձամբ Ստալինին: Նա այդ մասին քաջատեղյակ էր: Բացի այդ՝ ո՞վ էր ստեղծել նման վարչակարգ ու միջավայր, ուր ամենուր մոլեգնում էր մարդաորսը: Արդյո՞ք Ստալինի նախաձեռնությամբ չէր, որ կոլեկտիվացման փուլում ընդունվեց այսպես կոչված, երեք հասկի մա-

սին օրենքը²⁸: Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ-ի և ԺԿԽ-ի 1932 թ. օգոստոսի 7-ի «Պետական գույքի պաշտպանության մասին» օրենքի՝ սահմանվում էր՝ հանրային, կոլտնտեսային և կոոպերատիվի գույքը, բերքը, անասունը և այլն հափշտակողները ենթակա են գնդակահարության, ամբողջ գույքի բռնագրավմամբ, մեղմացնող հանգամանքի դեպքում՝ ազատագրվում 10 տարուց ոչ պակաս ժամկետով, դարձյալ գույքի բռնագրավմամբ: Նման հանցագործների վրա համաներում չէր տարածվում²⁹:

1930-ական թթ. ռեպրեսիվ քաղաքականության գաղափարական թեզերից (կարծրատիպերից) մեկը դարձավ 1930 թ. ՀամԿ(բ)Կ 16-րդ համագումարում (1930 թ. հունիս) շրջանառված Ստալինի հայտնի այն տեսադրույթը, թե ամբողջ ձակատով սոցիալիզմի հարձակման պայմաններում քաղաքում և գյուղում սրվելու է դասակարգային պայքարը³⁰: Հենց այդ համագումարում ունեցած իր ելույթում նա ռեպրեսիաները դիտում էր սոցիալիստական շինարարության բնագավառում հարձակման անհրաժեշտ տարր³¹: Դա նշանակում էր, որ 1920-ականներից սկսված բռնաձնշումների քաղաքականությունը նոր թափ պետք է ստանար, ավելի շատ սոցիալիզմի ու ժողովրդի թշնամիներ պետք է բացահայտվեին ու վերացվեին:

Կուսակցական-պետական պատասխանատու աշխատողների և նույնիսկ շարքայինների շրջանում ստեղծվեց անվստահության ու վախի մթնոլորտ: Սոցիալիզմի կառուցման ձանապարհին թե՛ կոմկուսի ներսում և թե՛ դրանից դուրս պետք է թշնամիներ հայտնաբերվեին, այստեղից էլ՝ ամեն մեկը, փորձելով իբրև թե իրեն ապահովագրել, իր մորթին փրկել, մատնում ու «ծախում» էր մյուսին՝ դիմելով հավանական ու անհավանական ստերի, կեղծիքների ու գրպարտությունների, առանձին դեպքերում նաև իր հարազատների նկատմամբ: «Դժվար է վերարտադրել քաղաքական ու բարոյահոգեբանական իրադրությունը, - գրում է պրոֆ. Վլ. Ղազախեցյանը, - որ հաստատվել ու տիրում էր երկրում նշված տարիներին: Առավոտյան մարդիկ արթնանում էին և շտապում տեղեկանալ, թե գիշերը ում են տնից տարել: Վախն ու կասկածը տիրել էր բոլորին: Մատնությունը ստացել էր համատարած բնույթ: Գործակալական-լրտեսական ցանց էր ստեղծվել ամենուրեք՝ քաղաքացիական բնակչության միջավայրում, աշխատավայրում, բանտում ու արքարում»³²: Դա հիշեցնում էր հայ մեծանուն գրող, երգիծաբան Եր. Օտյանի նկարագրած Կ. Պոլսի հայկական թաղամասերում տիրող մթնոլորտը 1915 թ. ապրիլի 24-ի մահագույժ գիշերը³³:

Նման ընթացքի շարժառիթներից մեկն էլ այն էր, որ 2-րդ հնգամյա պլանով նախատեսված էր ավարտել սոցիալիզմի կառուցումը ԽՍՀՄ-ում: Դա նշանակում էր, որ պետք է վերացվեին բոլոր հակախորհրդային, հակահեղափոխական տարրերը, և երկրում հաստատվելու էր հաղթանակած սոցիալիզմի բանվորագյուղացիական պետությունը, ինչի իրավական

28 Стів История России XX век (1894-1939), отв. ред. Зубов А. Б., М., 2009, էջ 943:

29 Стів История Советской Конституции в декретах и постановлениях Советского правительства 1917-1936, составил С. Студеникин, М., 1936, էջ 328:

30 Стів **Ստալին Ի. Վ.**, Երկեր, հատ. 12, Եր., 1949, էջ 40, 42, 342-343; Լենինիզմ, քրեստոմատիա, պր. 2, Եր., 1935, էջ 378; Страницы истории советского общества: люди, проблемы, факты, М., 1989, էջ 137:

31 Стів **Ստալին Ի. Վ.**, նույն տեղում, էջ 348:

32 **Ղազախեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 479-480:

33 Стів «Վերջին լուր», Կ. Պոլիս, 25 ապրիլի, 1921 թ., տե՛ս նաև «Երկիր», Եր., 24 ապրիլի, 2001 թ.:

ձևակերպումը եղավ 1936 թ. ԽՍՀՄ սահմանադրությունը:

Մարդիկ սպառնալիքից, վախից դրդված՝ ինքնապաշտպանության բնագրով դիմում էին մատնությունների՝ միմյանց դեմ մատնագրեր գրելով, կեղծ ու ստահող լուրեր տարածելով՝ իրարից հաշիվ մաքրելու, շատ դեպքերում անձնական վրեժ լուծելու, պաշտոն ու արտոնություն ստանալու, վերադասին շողոքորթելու և այլ նկատառումներով: Եվ այդ բռնությունների ու մարդասպան հասարակական-քաղաքական մթնոլորտի պատճառը պետք է փնտրել ոչ թե մատնիչ հարևանի, կամ ստորաքարշ պաշտոնամուլի, այսինչ ծառայողի, չեկիստի, այլ խորհրդային երկրում ձևավորված միակուսակցական-ամբողջատիրական, ավտորիտար համակարգի մեջ: «Բռնապետական վարչակարգը, դարեր առաջ նշել է ֆրանսիացի մեծ մտածող Շ. Մոնտեսքյուն, ահաբեկչական վարչակարգ է, որը գիտի միայն մեկ ուղի՝ քաղաքացիներին ահաբեկելու ուղին»³⁴: Նա, մեկ այլ տեղ խոսելով բռնապետական պետության բնույթի մասին, բացատրում էր, որ «բռնապետական կառավարության համար հարկավոր է վախ»³⁵: Իսկ ռուս մեծ մտածող ու փիլիսոփա Նիկոլայ Բերդյաևը խորհրդային վարչակարգի վերաբերյալ գրում էր. «Խորհրդային պետությունը դարձավ այնպիսին, ինչպիսին ցանկացած բռնակալ պետություն: Նա գործում է նույն մեթոդներով, ստով ու բռնությամբ»³⁶:

Մարդիկ իրենց արարքների արդարացման համար մատնել են իրար, քանզի հասարակական-քաղաքական մթնոլորտն էր այդպիսին: Կուսակցական-պետական մարմինները ստեղծել էին նման մթնոլորտ, որպեսզի իբր կարողանան հայտնաբերել ու որսալ «ժողովրդի թշնամիներին» ու ոչնչացնել նրանց: Ի. Ստալինի ձևավորած կուսակցական-պետական նոմենկլատուրան միաժամանակ նպատակ ուներ վախի ու տեռորի գործադրմամբ ամրապնդել ու հավերժացնել իր ամբողջատիրական իշխանությունը: Քանզի հայտնի փիլիսոփա և քաղաքագետ Հաննա Արենդտի բնորոշմամբ՝ տոտալիտար համակարգում վախի ազդեցությամբ ապրող բնակչությունը ենթակա է պարբերական տեռորի (բռնաճնշման)³⁷:

Հարկ է նշել, որ խորհրդային այս թերմիդորին ավելի կամ պակաս չափով մասնակից է եղել կուսակցական-պետական գրեթե ողջ ընտրախավը³⁸, բյուրոկրատական նոմենկլատուրային ողջ ապարատը, նաև շարքային կուսակցականներն ու անկուսակցականները, մի խոսքով՝ գրեթե ամբողջ հասարակությունը: Ցավոք, հավաքագրվել և մատնություններ են արել անգամ առանձին հոգևորականներ: Այլ խոսքով՝ խորհրդային լայն հասարակաշերտեր ապրել ու գործել են վախի, կեղծիքի, մատնությունների կասկածամտության, անգամ՝ հարազատը հարազատին «ծախելու» առօրեականությամբ:

Պետք է նաև ընդունել, որ պաշտոնյաների, կոմունիստների և հասարակ մարդկանց մի որոշակի հատված անկեղծ համոզմունք է ունեցել,

34 **Монтескье Ш.**, Избранные произведения, М., 1955, с. 30.

35 **Монтескье Ш.**, նույն տեղում, էջ 185:

36 **Бердяев Н. А.**, Истоки и смысл русского коммунизма, М., 1990, с. 105.

37 Տե՛ս **Арендт Ханна**, Истоки тоталитаризма, М., 1996, էջ 305-306 և 422:

38 Ստալինի մերձավորներից ռեպրեսիաների գործում առավել ակտիվ են եղել Վ. Միլոտովը, Լ. Բերիան, Ա. Վիշինսկին, Լ. Կազանովիչը և Ա. Ժդանովը: Օրինակ՝ զանգվածային ռեպրեսիաների ցուցակները անցել են ԽՍՀՄ ԺԿԽ-ի նախագահ Վ. Միլոտովի ձեռքով և հաճախ մարդկանց անունների դիմաց գրվել է. «պատժի առավելագույն չափ» (ռուսերեն՝ ВМН):

թե իբր՝ դասակարգային թշնամուն, հակահեղափոխականին, նախկին դաշնակցականներին և այլոց վերացնելով, արմատախիլ անելով՝ արագորեն կկառուցվի սոցիալիզմը, այդ հիմնավորմամբ՝ մարդկանց այս հատվածը ռեպրեսիաների երևույթն ընդունել է ըմբռնումով:

Մեր կարծիքով՝ մատնություններ անողներին, կեղծ ցուցմունքներ տվողներին կարելի է բաժանել երկու խմբի: 1-ինի մեջ պետք է դասել նրանց, ովքեր կեղծ լուրեր, տեղեկություններ, մատնություններ են արել՝ լինելով ազատության մեջ: Հասկանալի է, որ այդպիսի մարդկանց հանդեպ վերադասների կողմից առանձնապես ճնշում կամ հարկադրանք չի եղել: Նման մատնիչները առաջնորդվել են շահադիտական նպատակներով, իր հարևանի կամ ծանոթի հետ ունեցած վատ հարաբերություններով, ինքնապաշտպանական բնագոյով, իշխանություններին իրենց հավատարմությունը ցույց տալու հանգամանքով և այլն: Դրանք ավելի հաճախ եղել են շարքային մարդիկ՝ մանր ծառայողներ, գյուղացիներ:

Կեղծ ցուցմունք տվողների, իրար հանդեպ մատնություն անողների մյուս խմբին կարելի է դասել նրանց, ովքեր արդեն ձեռքակալվել և գտնվում էին կալանքի տակ կամ բանտում: Սոցիալական կազմի տեսակետից դրանք հիմնականում եղել են մտավորականներ, նախկին պետական պաշտոնյաներ և այլն: Հասկանալի է, որ կալանավորներից ցուցմունքներ են կորզվել քննչական, անվտանգության, դատախարակական մարմինների կողմից հարկադրանքի, բռնությունների, ուժի և այլ ներգործության միջոցներով՝ այս կամ այն անձի (ազատության մեջ գտնվող թե կալանքում) դեմ իրենց համար ցանկալի ցուցմունքներ, կեղծ մատնագրեր ստանալու նպատակով: Եվ կարճված գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կալանավորված մտավորականները, գիտության, գրականության և արվեստի գործիչները, կուսակցական-պետական նախկին պաշտոնյաները գրեթե առանց բացառության³⁹ հարկադրված են եղել նաև կեղծ ցուցմունքներ տալով, ժողովրդական լեզվով ասած՝ ծախել իրար՝ միգուցե բանտային խոշտանգումների չդիմանալով կամ էլ հուսալով մեղմ պատիժ ստանալ:

Ինչպես ասվեց, բարձր կրթություն ստացած պետական-կուսակցական պատկառելի գործիչներ ուժով, հարկադրանքով, սպառնալիքներով և այլ միջոցներով, հարցաքննությունների, ցուցմունքների, նաև առանձին դեպքերում՝ առերեսումների ընթացքում, գուցե հարկադրված, միմյանց հանդեպ կատարել են հաճախ կեղծ ու շինծու մատնություններ: Եվ այդպես շարունակ, կարուսելի նման, մեկի կեղծ, «թխված» կամ կիսաճշմարիտ ցուցմունքն ու վկայությունը հիմք է հանդիսացել մեկ ուրիշին մեղադրանք ներկայացնելու և քաղաքական բնույթի գործ կազմելու: Հարցաքննության արձանագրություններին կից բերված են տասնյակ ձեռքակալված կամ դեռևս հարցաքննման փուլում գտնվող մարդկանց ցուցմունքներ: Այդ մեթոդով են կազմվել հատկապես նախկին պետական-կուսակցական բարձր պաշտոնյաների մեղադրական գործերը: Օրինակ՝ ԿԳԿ-ի նախկին քարտուղար Ռուբեն Դաշոտյանի գործում բերված են մեկ ուրիշ մեղադրյալ՝

39 Մեր դիտարկած գործերից հանդիպել ենք միայն ՀՕԿ-ի վարչության նախկին նախագահ, ծնունդով՝ Տրապիզոնից Գր. Վարդանյանի դեպքին, երբ նա ներկայացված մեղադրանքում մինչև վերջ իրեն մեղավոր չի ճանաչել: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 78, թ. 86:

նախկին հողժողկոմ, ԺԿԽ-ի նախագահի տեղակալ Ար. Երզնկյանի 1937 թ. փետրվարի 12-ի ցուցմունքները ԿԳԿ-ի նախկին նախագահ Սերգո Մարտիկյանի և քարտուղար Ռ. Դաշտոյանի դեմ, որ նրանք Բերիայի հայտնի գիրքը⁴⁰ ու Ստալինին գովերգելու փոխարեն՝ քննադատել են նրանց⁴¹: Հարցաքննվողներից մեկն էլ՝ Սերիկ Դավթյանը, Երևանի համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան Հակոբ Զորյանի և մյուս հեղինակների կազմած Հին Հայաստանի «ծովից-ծով» քարտեզը համարել է հակահեղափոխական քարտեզ, որի հրահանգը իբր տվել է Ա. Խանջյանը և այլն⁴²:

Կեղծ ցուցմունքների, թույլատրելի և անթույլատրելի միջոցներով կորզված «խոստովանությունների», անազատության մեջ գտնվող մեղադրյալների սարքովի վկայությունների հիման վրա էլ, Հայկ ԽՍՀ քր. օր.-ի հիմնականում 59, 63, 64, 65, 67, 68 և այլ հոդվածներով քաղաքներում և շրջաններում կազմվում էր քր. գործը և համապատասխան մեղադրական եզրակացությամբ ուղարկվում դատարան: Այդ շրջանի նմանաբնույթ դատական պրակտիկայում կան մի շարք դեպքեր, երբ, այնուամենայնիվ, մեղադրյալն իրեն մեղավոր չի ճանաչել կամ էլ մասամբ է մեղավոր համարել, սակայն դա բնավ չի խանգարել, որ, օրինակ, ԽՍՀՄ Գերագույն դատարանի գին. կոլեգիայի (տրիբունալի) արտագնա նիստը կամ ՀԽՍՀ ՆԳԺԿ Եռյակը այդպիսիների հանդեպ ևս մահվան դատավճիռ կայացնի:

5. Ձերբակալությունների և մեղադրանք ներկայացնելու «հիմքերն» ու մեթոդաբանությունը

Քաղաքական ենթատեքստով մարդկանց ձերբակալելու, հարցաքննելու և մեղադրանք ներկայացնելու համար ամենատարածված փաստարկն այն էր, որ կապիտալիստական շրջապատման պայմաններում խորհրդային երկրում սոցիալիզմի կառուցմանը խոչընդոտում են հակահեղափոխական ու հակախորհրդային թշնամական ուժերը՝ տրոցկիստները, դաշնակցականները, կուլակները և այլն, իբրև թե ամենուրեք՝ ընդհատակում թե բացահայտ, գործում ու քայքայիչ աշխատանք են տանում այդ «ծողովրդի թշնամիները», ուստի պետք է նրանց բացահայտել, մերկացնել, դատել և վերացնել: Մինչդեռ կարելի է վստահաբար ասել, որ արդեն 1930-ական թվականների սկզբներից Հայաստանում խոսք չէր կարող լինել նման կազմակերպված քաղաքական բնույթի խմբերի ու կազմակերպությունների լայն գործունեության մասին:

Միանգամայն հնարովի, սուտ ու կեղծիք է, թե 1930-ականների Հայաստանում եղել են այսպես կոչված աջ-տրոցկիստական, ազգայնական քաղաքական խմբեր ու խմբակներ: Այդ ամենը եղել է ավելի շատ հնարք, քան իրականություն: Եթե ազգային նկարագիր ունեցող հայ առանձին դեկավար գործիչներ ու մտավորականներ նեղ շրջանակներում, զրույցների, խնջույքների ժամանակ արտահայտվել են Հայաստանի հանդեպ Կենտրոնի, անգամ՝ Անդրկովկասյան ղեկավարների խորական քա-

40 Խոսքը 1935 թ. լույս տեսած «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» կեղծիքներով հարուստ ու Ստալինին մեծարող գրքի մասին է:

41 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 10, գ. 2030, թ. 29-30:

42 Տե՛ս նույն տեղում, թ. 44-45:

ղաքականության, տնտեսության ու մշակութի զարգացմանը պատշաճ ուշադրություն չդարձնելու մասին, մյուս կողմից՝ ցանկություն են հայտնել, որ անարդար կերպով բռնազավթված Լեռնային Ղարաբաղը, Կարսի մարզը, Նախիջևանը, Սուրմալուն կամ Ախալքալաքը վերամիավորվի Հայաստանին, դա համարվել է ազգայնականություն՝ դրանից բխող հետևանքներով: Այդ ամենը բխում էր բոլշևիզմի գաղափարախոսությունից ու քաղաքականությունից, և նրա անմիջական պատասխանատուն ՀամԿ(բ)Կ ԿԿ-ն էր, նրա բարձրագույն ղեկավարությունը և ժամանակին Բոստոնի «Հայրենիք» թերթի կողմից՝ «Կարմիր միապետ»⁴³, իսկ Կահիրեի «Հուսարեր»-ի որակումով՝ «Ռուսաստանի դիկտատոր»⁴⁴ բնորոշումը ստացած **Իոսիֆ Ստալինը**:

Միևնույն ժամանակ հարկ է ուշադրություն դարձնել մեկ ուրիշ հանգամանքի վրա: Քաղաքական հետապնդումները, հարցաքննությունները, մեղադրանք ներկայացնելը, դատապրոցեսները կատարվել են խորհրդային սահմանադրության և քրեական ու դատավարական օրենսգրքերի համաձայն, որոնք ներծծված էին ընդգծված դասակարգային գաղափարախոսությամբ, «հակախորհրդային» որակվող ուժերի, խմբերի ու հոսանքների դեմ անհաշտ պայքարի հողվածներով: Ուստի երբ նման դեպքերում գործ էր կազմվում, կասկածյալ-մեղադրյալները պետք է գիտակցեին, թե իրենց ինչ է սպասվում: Մակայն խնդրի ողջ անհեթեթությունն այն է, որ ներկայացված մեղադրանքների 90 տոկոսից ավելին, եթե չասենք՝ 100 տոկոսը, եղել է անհիմն, կեղծ, շինծու ու սարքովի:

Խորհրդային պետության պարադոքսներից մեկն այն էր, որ «հաղթանակած սոցիալիզմի» սահմանադրությունը հռչակում էր շահագործման վերացման, մարդու և քաղաքացու իրավունքների, անձի անձեռնմխելիության մասին⁴⁵, բայց մյուս կողմից՝ այդ նույն ժամանակ մարդը զրկված է եղել սահմանադրական ամենաառաջնային ու հիմնական իրավունքից՝ կյանքի իրավունքից:

Բռնաձնշվածների հանդեպ հարուցված մեղադրանքների անհիմն լինելու մասին կարելի է գաղափար կազմել Ստալինի մահից ու Բերիայի վերացումից հետո երկրում սկսված գործերի վերանայման, կարճման ու արդարացման աշխատանքներից:

Քաղաքական դրդապատճառներով ներկայացված ամենատարածված մեղադրանքը այս կամ այն հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնական խմբին կամ կազմակերպությանը պատկանելն էր: Օրինակ՝ նման բնորոշում է տրվել Ն. Ստեփանյան - Խանջյան - Ս.Տեր - Գաբրիելյան՝ իբր գոյություն ունեցող տրոցկիստական-ազգայնական խմբին: Մակայն նրանց «մերկացնելուց» հետո, մենք տեսնում ենք, որ գրեթե նույն որակումն է տրվել դրանից անմիջապես հետո «բացահայտված» Անատունու և մյուսների գլխավորած խմբին: Ընդ որում, ԿԿ-ի 1-ին քարտուղար Ա. Անատունին «բացահայտել է» իր նախորդին՝ Խանջյանին, որը ենթարկվել է բռնադատության՝ սպանության կամ ինքնասպանության ձևով:

43 «Հայրենիք», Պոսթըն, 14 հունվարի 1930 թ.:

44 «Յուսարեր», Գահիրե, 20 դեկտեմբերի 1929 թ.:

45 Տե՛ս История Советской Конституции (в документах), 1917-1956, М., 1957, էջ 743-744:

Այնուհետև 1937 թ. ՀԿ(Բ)Կ ԿԿ-ի սեպտեմբերյան հայտնի պլենումից հետո կարուսելի նման «բացահայտվում է» Ամատունու հակահեղափոխական աջ-տրոցկիստական կազմակերպությունը, և գալիս է նորընտիր ԿԿ-ի 1-ին քարտուղար Գր. Հարությունյանի (Արուիթնովի) հերթը՝ պատժելու Ամատունուն և նրա մերձավոր խմբին: Սա էլ է ցույց տալիս, որ ոչ Խանջյան-Տեր-Գաբրիելյանի և ոչ էլ Ամատունու պարագայում իրականում չի եղել հակահեղափոխական, աջ կամ ձախ տրոցկիստական, ազգայնական, հակապետական ու հակախորհրդային որևէ խումբ կամ կազմակերպություն: Սակայն չի կարելի հավասարության նշան դնել այդ երկու խումբ գործիչների միջև: Այնուամենայնիվ, առաջինի ներկայացուցիչները՝ Խանջյանը, Ն. Ստեփանյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և մյուսները, եղել են ազգային նկարագիր ունեցող կոմունիստներ, որն ամենևին էլ չի նշանակում, թե նրանք եղել են հակահեղափոխական, հակախորհրդային, ազգայնական: Նույն կերպ անհիմն ու զրպարտչական էին մեղադրանքները հայ մեծանուն գրողների՝ Ե. Չարենցի, Ա. Բակունցի և մյուսների հասցեին:

6. Հատվածական մոտեցումներ բռնաճնշումների գոհերի հանդեպ

Խորհրդային իշխանությունները հետապնդում-հավածանք-բռնաճնշումների ընթացքում ցուցաբերել են որոշակի խտրականություն արևելահայության և արևմտահայ գաղթականության հանդեպ՝ վերջինիս դիտելով քաղաքականապես ավելի հետամնաց և Լենինի ու սոցիալիզմի գաղափարներին ոչ այնքան հաղորդակից:

Արևմտահայ գաղթականության հանդեպ խտրականությունը նորույթ չէր: Նման մոտեցում է դրսևորվել խորհրդային իշխանության դեռ առաջին տարիներից: Խորհրդային իշխանությունները արևմտահայ կամավորաշխարհագրային խմբերն էին համարում 1920 թ. Մայիսյան խռովության հիմնական ճնշող ուժը, անվստահությունը գալիս էր նաև 1921 թ. Փետրվարյան ապստամբության ժամանակ արևմտահայ նախկին կամավորների ցուցաբերած ակտիվությունից և այլն: Սա էլ որոշակի շերտանստվածք էր առաջացնում իշխանությունների մոտ և հանրապետության ազգաբնակչության նկատմամբ ստեղծում էր հատվածական մոտեցում: Ցավոք, հատվածականությունը դրսևորվում էր ոչ միայն իշխանությունների կողմից, այլ նաև հայ բնակչության տարբեր հատվածներում: Չոռոսանք, որ այն ժամանակ գործածության մեջ էին գաղթական (եկվոր) և էռլական (տեղացի) բաժանարար հասկացությունները, երբ նույնիսկ իրար աղջիկ չէին տալիս:

Արևմտահայ ներգաղթյալների և արևելահայերի՝ բռնաճնշումների ենթարկվածների քանակական համամասնության տեսակետից, անշուշտ, ավելի հաճախ բռնադատվել են առաջինները, քան արևելահայ հատվածը: Հարկ է նկատել, որ խորհրդային իշխանությունների կողմից արևմտահայ ներգաղթյալը ամենից առաջ ընկալվում էր որպես դաշնակցական, ազգայնական, Էրգրին կարոտող, այնտեղ վերադառնալ ցանկացող, ուստիև՝ թուրքից հայրենի հողերի պահանջատեր: Արևմտահայ գաղթականը դժգոհ

էր խորհրդային իշխանությունից նաև քաղաքական առումով, որովհետև նրա քաղաքական սպասումները չէին իրականանում, տաճկահայ խնդիրը մնում էր չլուծված: Բացի այդ՝ արևմտահայությանն ավելի խորթ ու անհասկանալի էին լենինիզմի ու սոցիալիզմի գաղափարները, որովհետև իրենց ապրած երկրում՝ Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մեջ, ըստ էության, սոցիալիզմի գաղափարի ու պրակտիկայի համար որևէ նախադրյալ չի եղել: Այդ իսկ պատճառով խորհրդային իշխանությունների համար արևմտահայը համարվում էր օտարոտի և անբարեհույս տարր: Այս պարագան նկատի ուներ խորհրդային պատմաբան Բ. Օհանջանյանը, երբ նա հայ գաղթականությանն անպարկեշտ կերպով որակում էր «քաղաքականապես տգետ մասսա»⁴⁶:

Մինչդեռ արևելահայերը, որոնց կոչում էին նաև ռուսահայեր, քաղաքական կողմնորոշման առումով ավելի ռուսամետ էին, գաղափարական տեսակետից քիչ թե շատ ծանոթ սոցիալիզմին ու բոլշևիզմին: Թեև Արևելյան Հայաստանում դասական առումով բանվոր դասակարգ (պրոլետարիատ) չի եղել, սակայն նրանք մամուլից և այլ միջոցներով որոշ չափով տեղյակ էին XX դարասկզբից Ռուսաստանում ու Անդրկովկասում ընթացող սոցիալ-դասակարգային պայքարի դրսևորումներին, սոցիալ-դեմոկրատ առանձին գործիչների անուններին:

Դրա համար էլ քաղաքական հետապնդումների տեսակետից արևելահայ հատվածը համեմատաբար եղել է քիչ խոցելի, քան արևմտահայը: Բայց դա բնավ չի նշանակում, թե ամբողջ երկիրը ճարակած բռնաձնշումներն անցել են նրա կողքով: Արևելահայ հատվածի մոտ մատնությունների, կեղծ վկայությունների, ձերբակալությունների համար ավելի հաճախ պատրվակ կարող էին լինել վախը, ինքնապաշտպանական բնագործ, նախանձը, թշնամանքը, մեկ ուրիշի պաշտոնին, սեփականությանը, տանը, անգամ կնոջը տիրանալու ցանկությունը, որևէ մեկին մատնելով՝ վերադասի հանձնարարությունը կատարելը, այդ ճանապարհով դիրքի, պաշտոնի հասնելը, իսկ մի որոշ մասն էլ դրանով գուցե ցանկացել է անկեղծ ցույց տալ իր նվիրվածությունը խորհրդային կարգերին և այլն:

Մատնության վարակը, բնականաբար, առկա է եղել նաև գաղթականության միջավայրում, բայց կարծում ենք ոչ այն ծավալի, ինչպես արևելահայ հատվածի մոտ, որովհետև գաղթականությունն այդ ժամանակ դեռևս լիովին չէր ինտեգրվել խորհրդային համակարգին, և մատնությունների դիմելու համար առանձնակի քաղաքական ակնկալիքներ չի ունեցել:

7. Հարցաքննությունների ընթացքի և արձանագրությունների նմանությունը

Կարձված գործերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սովորաբար հարցաքննությունների սկզբնական փուլում ինչ-որ հանցանքի մեջ կասկածյալ համարվողը փորձել է ցույց տալ կամ հիմնավորել իր անտեղյակությունը, անմեղությունը, մանավանդ որ ներկայացվող մեղադրանքը

46 Օհանջանյան Բ. Ս., Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921-1925 թթ.), Եր., 1982, էջ 62:

կեղծ ու անհեթեթ էր: Օրինակ՝ որ ինքը որևէ առնչություն չունի հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնական կամ այլ որակումներով խմբերին ու կազմակերպություններին, մանավանդ որ նման խմբի կամ կազմակերպության գոյության մասին տեղյակ չի եղել, նման անուն չի էլ լսել: Սակայն կազմված գործերի ընթացքից նկատվում է, որ մի քանի հարցաքննությունից հետո «կասկածյալը» սկսում է «փափկել», նախնական ցուցմունքները փոխել և «խոստովանել» իր «հանցավոր» կապերի ու գործողությունների վերաբերյալ, համենայն դեպս գործերում այդպես է արձանագրված: Օրինակ՝ 1936 թ. նոյեմբերի 24-ին Պողոս Մակինցյանի հանդեպ հարուցված գործով 308 էջանոց փաստաթղթերից երևում է, որ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների ցուցմունքներում նա իրեն անմեղ է համարել, սակայն սկսած 1937 թ. փետրվարից՝ հարցաքննությունների ընթացքում արդեն հայտարարում է, որ ինքը եղել է «ծածուկ տրոցկիստ»⁴⁷, որ իրենց «հակահեղափոխական տրոցկիստական խումբը պայքար էր մղում ՀամԿ(բ)Կ և խորհրդային իշխանության դեմ, և նրա պայքարը վերջին հաշվով ուղղված էր կապիտալիզմը մեր երկրում վերականգնելու համար»⁴⁸: Հետագա հարցաքննություններում Մակինցյանն ավելի է խորացրել իր «հակահեղափոխական» վարքագիծը ու հայտնել է, որ իրենց աջ-տրոցկիստական խումբը՝ Ս. Տեր-Գաբրիելյանի գլխավորությամբ, «ահարեկչություն էր նախապատրաստում Ստալինի և Անդրերկրկոմի քարտուղար Բերիայի դեմ»⁴⁹: Հարցաքննությունների երկրորդ փուլում կասկածյալ Պ. Մակինցյանը, ըստ ամենայնի, ինչպես ասում են, «մշակվելուց» հետո սկսում է «խոստովանել» իր նորանոր մեղքերը: Այսպես՝ խոսելով իր արտասահմանյան գործունեության մասին նա հայտարարում է. «սկզբում ինձ ներկայացված մեղադրանքը իմ լրտեսական և տեռորիստական գործունեության մասին նախորդ հարցաքննությունների ժամանակ, խոստովանում եմ, որ թաքցնում էի: Այժմ ես եկել եմ այն գիտակցության՝ տալ անկեղծ ու սպառիչ ցուցմունքներ ինձ վերաբերող մեղադրանքներին, թե ես ինչպես եմ անցել լրտեսական աշխատանքի»⁵⁰ և այլն: Այս ամենը բառիս բուն իմաստով անհեթեթություն է:

Բերենք մեկ այլ օրինակ. կալանված ԿԿ-ի նախկին 1-ին քարտուղար Ա. Ամատունին երկու անգամ՝ 1937 թ. նոյեմբերի 17-ին և դեկտեմբերի 22-ին դիմում է գրել ԽՍՀՄ ՆԳԺԿ Ն. Եժովին: Առաջին դիմումով նա փորձել է պաշտպանել իրեն, որ ինքը անմեղ է, իսկ երկրորդում՝ նա արդեն ընդունել է իր մեղքը, որ ինքը զրպարտել է կուսակցությանը և խորհրդային իշխանությանը, որ իր արածը «հրեշավոր հանցագործություն է» և այլն⁵¹: Քանի որ երկու դիմումներն էլ գրված են իր ձեռագրով ու ստորագրված իր կողմից, ապա դիրքորոշման նման կտրուկ փոփոխությունն ու ինքնախարազանումը կարելի է բացատրել նրա հետ «բացատրական» աշխատանք տանելու հանգամանքով: Հարկ է նկատել, որ ձերբակալվածների ցուցմունքների փոփոխությունները ավելի հաճախ արձանագրվել են կու-

47 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 1710, թ. 78:

48 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 1710, թ. 83:

49 Նույն տեղում, թ. 190:

50 Նույն տեղում, թ. 218:

51 Տես ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 197:

սակցական–պետական գործիչների և մտավորական ներկայացուցիչների, քան շարքային քաղաքացիների մոտ: Սա էլ ինքնին հասկանալի է, որովհետև նախկին ղեկավար դեմքերի ցուցմունքի հարգն ու կշիռն ավելի մեծ էր, քան շարքային կալանվածի:

Անհրաժեշտ ցուցմունք և խոստովանություն կորզելու նույն մեթոդը կիրառվել է մյուս գործերով անցած բազում մեղադրյալների նկատմամբ: Հասկանալի է, որ իրականում չգո, սարքված գործերով մեղադրված մարդկանց դատավճիռներն ավարտվել են գերազանցապես պատժի առավելագույն չափով՝ գնդակահարությամբ:

Ձերբակալվածների հարցաքննությունների և կազմված մեղադրանքների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանցում կան արհեստական, սարքովի ու գրեթե իրար նմանվող ձևակերպումներ, որոնք ինքնին խոսում են քննչական մարմինների նախապես մշակված պլանով ու մեթոդներով աշխատելու մասին: Օրինակ՝ ձերբակալվածներ Պ. Սակինցյանի, Դր. Տեր–Սիմոնյանի, Գր. Վարդանյանի, Ար. Երզնկյանի, Դ. Շահվերդյանի, Ս. Փիրումյանի, Ե. Չուբարի և ուրիշների հարցաքննությունների արձանագրությունների համեմատությունից ակներև է դառնում հարցաքննվողներին տրված հարցերի ու հատկապես պատասխանների ոչ միայն նմանությունը, այլև տեղ–տեղ բառացի նույնությունը, ուստիև դժվարանում են գանազանել, թե դա կոնկրետ ում արձանագրությունն է⁵²: Կարելի է ենթադրել, որ քննչական մարմինները նախապես ունեցել են կազմած պատրաստի հարցեր, չի բացառվում՝ նույնիսկ արդեն կազմված պատասխաններ, և այդ հարցերով տարբեր հարցաքննվողներից կորզվել է տառացիորեն նույն պատասխանը՝ բառ առ բառ, նախադասություն առ նախադասություն, պարբերություն առ պարբերություն: Անգամ Հայկոմկուսի ԿԿ–ի նախկին 1–ին քարտուղար, մեղադրյալ Ամատունու աջ–տրոցկիստական (Ամատունի, Գուլոյան, Ակոպով և ուրիշներ) համարված խմբի հարցաքննության նյութերում կարելի է հանդիպել նույնաբնույթ ձևակերպումների: Օրինակ՝ մեղադրյալ, ԿԿ–ի նախկին 2–րդ քարտուղար Ակոպովը, պատասխանելով հորինված կազմակերպության վերջնանպատակի մասին, հայտնել է, որ իրենց «հակախորհրդային տրոցկիստական կազմակերպության վերջնանպատակը Հայաստանի անջատումն էր ԽՍՀՄ–ից և բուրժուազգայնական Հայաստանի ստեղծումը արևմտաեվրոպական որևէ պետության հովանավորության ներքո»⁵³: Ի դեպ, այս նույն միտքն է ձևակերպված նաև Ա. Ամատունու մեղադրական եզրակացության մեջ⁵⁴:

Վերը բերվածներից կարելի է եզրակացնել, որ հարցաքննությունների արձանագրությունները, ցուցմունքների կորզումը, ուստի և դրան հետևող մեղադրականները պատրաստվել են նախապես կազմված պլանով, նույն մեթոդաբանությամբ, նույնական բառերով ու կաղապարված նախադասություններով, ինչը կասկած չի թողնում, որ դրանք հարցաքննվողների մտքերը չեն: Քննչական մարմինների աշխատողները դրանք գրառել են արձանագրությունների մեջ, հրամցրել հարցաքննվող մեղադրյալի անունից և

52 Տես ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 78, ց. 3, գ. 1710, թ. 90–92, ց.10, գ. 2030, ց. 12, գ. 2114 և այլն:

53 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 87:

54 Տես նույն տեղում, թ. 204–207:

ստիպել նրան դրա տակ դնել սեփական ստորագրությունը կամ էլ երբեմն դրա անհրաժեշտությունն անգամ չգտնելով՝ իրենք են նմանակել ձերբակալվածի ստորագրությունը:

8. Ցուցմունքներ կորզելու եղանակները

Առանձին քննության նյութ կարող է լինել ՆԳԺԿ և Պետքաղվարչության քննչական մարմինների կողմից կուսակցական-պետական, մտավորական, մշակույթի և այլ գործիչներից ցանկալի ցուցմունքների կորզման մեթոդների ու եղանակների հարցը: Ի տարբերություն հասարակ գյուղացիների՝ նրանք եղել են առավել կրթված, քաղաքականապես հասուն և ակտիվ մարդիկ: Սակայն, ինչպես ասվում է, Ֆրանսիական Մեծ հեղափոխության օրինակով՝ հեղափոխությունները խժռում են նաև իրենց հարազատ զավակներին:

Քննչական մարմինները կուսակցական-պետական, մտավորական, մշակույթի և այլ գործիչների հարցաքննությունների ընթացքում հոգեբանական ներգործությամբ, ընտանիքի անդամների հանդեպ հաշվեհարդար տեսնելու սպառնալիքներով, խոշտանգումներով, կտտանքներով, երբեմն էլ՝ առերեսումներով, իսկ խոստովանելու դեպքում թեկուզ և չկատարած հանցանք-զանցանքի համար ավելի մեղմ հողված սահմանելու հավաստիացումներով, կորզել են իրենց համար անհրաժեշտ ցուցմունքները: Այստեղ է ասված ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Վիշինսկու թևավոր դարձած խոսքը, որ «**ինքնախոստովանական ցուցմունքը ապացույցների թագուհին է**»⁵⁵: Այլ խոսքով՝ կարելի է ուժով ու բռնությամբ կորզել մեղավորության մասին ինքնախոստովանություն և կայացնել դատավճիռ: Արվել է այնպես, որ որևէ մեկը անհրաժեշտ ցուցմունք տա իր ծանոթի կամ գործընկերոջ մասին, կարևոր չէ՝ ճիշտ թե կեղծ: Մեկ այլ կալանվածին էլ հարկադրել են ցուցմունք տա մեկ ուրիշի դեմ և այդպես շարունակ:

Բանտարկյալներից կորզված ցուցմունք-խոստովանությունները գրառված են այդ մարդկանց այժմ կարճված ու գաղտնագերծված անձնական գործերում: Այդ բոլոր գործերը քաղաքական, հոգևոր, բարոյական, մտավոր ու ֆիզիկական առումներով խեղված մարդկանց ապրած ողբերգությունների տարեգրություններ են՝ նման Ա. Դանթեի երկի սյուժեին:

Հաճախ քննչական մարմինների կողմից նախապես կազմվել է հարցաքննության ու ցուցմունքների արձանագրությունը, և ստիպել են, որ մեղադրյալը ստորագրի այն՝ երբեմն առանց բովանդակությանը ծանոթանալու: Բայց որպես կանոն՝ ամեն մի հարցաքննության արձանագրության վերջում, երբեմն էլ յուրաքանչյուր էջում գրված է. «Արձանագրությունը ընթերցել են, ցուցմունքները իմն են, գրի են առված իմ բառերով, որի համար ստորագրում եմ»:

Անհրաժեշտ ցուցմունք կորզելու համար հարցաքննությունները անցկացվել են կամ ճնշում-հարկադրանքի միջոցներով, կամ էլ նախապես մեղադրյալին խոստացվել է, որ եթե ինքը խոստովանի, ասենք, որ ինքը հակահեղափոխական է, տրոցկիստ է կամ ազգայնական, ապա դա կար-

55 Ласло Белادي, Томаш Краус, Сталин, М., 1990, с. 250.

ձանագրվի և հետո իրեն ազատ կարձակեն: Եվ հնարավոր է, որ մարդիկ դիմել են նման քայլի: Այլապես զարմանալ կարելի է, որ, օրինակ, վերը հիշատակված Պ. Մակինցյանը 1937 թ. մարտի 4-ի հարցաքննության ժամանակ «խոստովանել է», որ ինքը 1931-ից մինչև իր ձերբակալության օրը ընդգրկված է եղել աջ-տրոցկիստական ազգայնական խմբում և պայքար է մղել ՀամԿ(բ)Կ-ի և խորհրդային իշխանության դեմ, որ ինքը և խմբի անդամները (թվարկված են տասնյակ նախկին ղեկավարների անուններ) եղել են ծպտյալ տրոցկիստներ («скрытые троцкисты»⁵⁶): Հոգեպես հավասարակշիռ, բանական մարդը, եթե ներգործության այլ միջոցների չի ենթարկվել, ինչպես կարող էր չեղած բանի մասին կյանքի գին արժեցող ցուցմունք տալ: Սակայն Մակինցյանի հետ միևնույն խցում նստած մեկ այլ կալանավոր ՀԽՍՀ ԿԳԿ-ի նախկին նախագահ Արմեն Անանյանը՝ տվել է հետևյալ բացատրությունը: Վերջինիս պատմելով՝ իր հետ նստած Պ. Մակինցյանը հայտարարում էր, որ ինքը անմեղ է և որ իր նկատմամբ գործադրված մարմնական պատժամիջոցների պատճառով է սուտ ու զրպարտիչ ցուցմունքներ տվել ինչպես իր, այնպես էլ Ս. Տեր-Գաբրիելյանի, Ս. Փիրումյանի, Դ. Շահվերդյանի, Գր. Վարդանյանի և մյուսների մասին⁵⁷:

Կասկած չկա, որ քննիչների համար առավել կարևոր ցուցմունքները ձեռք են բերվել ճնշում-ներգործությունների միջոցով: Քննությունը օգտագործել է նաև մեղադրյալի վրա ներգործող բառախաղեր: Այսպես՝ Վահան Թոթովենցի մեկ տարուց ավելի հարցաքննությունների ընթացքում ավելի հաճախ օգտագործել են բառախաղային հետևյալ կապակցությունները, իբր. «Հետաքննությունն իր տրամադրության տակ ունի ստույգ տվյալներ» կամ «Դուք ճիշտ չեք ասում, քննությանն ստույգ հայտնի են», «Դուք հետաքննությունից թաքցնում եք...»⁵⁸ և այլն: Եվ այդ հնարքներով փորձել են խոստովանություն կորզել հարցաքննվողից: Քննչական նյութերը ցույց են տալիս, որ չեկայի քաղաքական բովով անցած քննիչները կալանավորների վրա ներգործելու, ցուցմունքներ կորզելու հարցերում իրենց բավականաչափ արհեստավարժ են դրսևորել:

Անշուշտ, հարցաքննությունների ընթացքում ցանկալի ցուցմունքներ ու խոստովանություններ ստանալու նպատակով դատաքննչական մարմինները հաճախ դիմել են բռնի միջոցների, որոնց մասին վկայությունները հասկանալի պատճառներով տեղ չէին կարող գտնել նյութերում ու արձանագրություններում: Դատավարության ժամանակ էլ հազիվ թե մեղադրյալը համարձակություն ունենար այդ մասին բարձրաձայնել, եթե անգամ հաշվի առնենք, որ դատավարություն կոչվածը սովորաբար տևել է 15-ից մինչև 20 րոպե:

Կարձված դատական գործերից մեկում առկա է ասվածին հակառակ մի փաստ: Հակահեղափոխական ընդհատակյա կազմակերպությանը անդամակցելու ու վնասարարությամբ զբաղվելու մեղադրանքներով դատական գործ էր հարուցվել 18 գիտնականների հանդեպ, դրանց թվում՝ Աշխարհաբեկ Քալանթարի, Հակոբ Զորյանի, Հովհաննես Նավակատիկյանի, Կա-

56 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 78, թ. 44:

57 Տես ՀԱԱ, ֆ. 1991, ց. 1, գ. 78, թ. 44-49 և 87:

58 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 3, գ. 1086, թ. 39, 44, 59-60, 64-65, 85 և այլն:

րապետ Մելիք-Օհանջանյանի, Ստեփան Ղամբարյանի և այլոց: Դրանց շարքում նշված էր Հոդժողկոմատի գյուղատնտեսական ինստիտուտի նախկին աշխատակից, Թիֆլիսի հայ ազնվականական ընտանիքից սերած, բարձրագույն կրթությամբ Անաստասիա Վերմիշևայի անունը: Վերջինիս և ևս մի քանիսին՝ Գ. Գրձեյանին, Պ. Քալանթարյանին, մեղադրել են գյուղատնտեսության ասպարեզում վնասարարությամբ զբաղվելու՝ մկնանման կրծողների և մորեխի դեմ պատշաճ պայքար չծավալելու, Միչուրինի առաջավոր մտքերի դեմ հանդես գալու և այլնի մեջ: Սակայն այստեղ էականը այդ զավեշտական մեղադրանքը չէ: Վերը նշվածից գատ՝ Ա. Վերմիշևայի մասով նշված է, որ նա ցուցմունք է տվել, թե իբրև ինքը ընդգրկված է եղել 1935 թ. Հայաստանում գործող ընդհատակյա դաշնակցական կազմակերպության մեջ և լրացուցիչ հետաքննությամբ նրան մեղադրանք է ներկայացվել ՀԽՍՀ քր. օր.-ի 59, 19-65 և 64 հոդվածներով: Ա. Վերմիշևան ձերբակալված է եղել 1937 թ. նոյեմբերի 4-ից: Տևական ժամանակ անց նրա դատական գործը լսվել է Անդրկովկասի զինվորական օկրուգի ռազմական տրիբունալի արտագնա նիստում՝ 1939 թ. հունիսին: Մեզ հետաքրքրողն այն է, որ կայացված դատավճռի եզրակացության մեջ արձանագրված է, որ Ա. Վերմիշևան ցուցմունքների մի մասը տվել է հարկադրված: Մեջբերում ենք բառացի. «показания принуждена была дать под действием репрессий со стороны следствия»: Արդյունքում՝ հաշվի առնելով, որ նրա դեմ ուղղված ցուցմունքները համարվել են հակասական ու չհիմնավորված, դրա հիման վրա էլ մեղադրանքը համարվել է չապացուցված, և նա ազատվել է կալանքից⁵⁹:

Հարցաքննությունների ընթացքում ցուցմունքներ կորզելու տիպիկ օրինակ է ՀԿ(բ)Կ ԿԿ-ի նախկին քարտուղար Ալ. Շահսուվարյանի գործում արձանագրվածը: Այն պարունակում է 1937 թ. սեպտեմբերից մինչև 1938 թ. հունիսը «աջ-տրոցկիստ, հակահեղափոխական» մեղադրանքով բանտում հայտնված և ապա գնդակահարված ԿԿ-ի նախկին 3-րդ քարտուղար, Երքաղխորհրդի նախկին նախագահ Ալ. Շահսուվարյանի բանտային կյանքի պատմությունը, որը քննիչ Միրզոյանին է հաղորդել 1937 թ. դեկտեմբերի 19-ից 23-ը նրա հետ նույն խցում եղած մեղադրյալ Դուլգարովը: 1938 թ. ապրիլի 10-ի հարցաքննության ժամանակ քննիչները հետին թվով հարց են տվել Դուլգարովին, թե նախկինում իր հետ նույն բանտախցում եղած Շահսուվարյանը ինչից է խոսել: Դուլգարովը պատմել է, որ այդ ընթացքում Շահսուվարյանին մի քանի անգամ տարել են հարցաքննության: Հարցաքննությունից վերադառնալուց հետո նա պատմել է, որ «քննիչները իրենից պահանջել են պատմել իր տեղորհիստական գործունեության մասին և տալ իր տեղորհիստ համախոհների անունները: Իբրև տեղորհիստների՝ նա նշել է Ա. Հովհաննիսյանի, Ս. Մելիք-Օսիպովի, Պ. Կուզնեցովի (Դարբինյանի), Ա. Մինասյանի անունները»⁶⁰: Ուշագրավ է, որ մի հարցաքննության ժամանակ կալանավոր Շահսուվարյանը քննիչներին է դիմել թող իրենք հուշեն, թե ում անունը ինքը տա, ում կարող է անվանել տեղ-

59 Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ.1191, ց. 10, գ. 755, թ. 1-118:
60 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 81, թ. 78-79:

րիստ⁶¹: Դուլգարովը նաև հայտնել է, որ ամեն անգամ հարցաքննությունից վերադառնալուց հետո Շահուվարյանը ասում էր, որ «այսօր ինքը մատնեց սրան-նրան»⁶²: Կալանավոր Շահուվարյանից պահանջել են, որ նորանոր մարդկանց անուններ տա: Նա էլ տվել է բազմաթիվ մարդկանց անուններ՝ նույնիսկ անձամբ տեսած չլինելով: Նա նման քայլի է դիմել, որպեսզի իրեն քիչ տանջեն և հանգիստ թողնեն:

Իբրև ասվածի լրացում հավելենք, որ հետագայում Ա. Շահուվարյանի գործի կարճման կապակցությամբ 1954 թ. ապրիլի 16-ին հարցաքննվել է 1937 թ. հոկտեմբերին նրա հետ նույն բանտախցում ամիսուկես նստած, 1900 թ. ծնված Աշոտ Աբրահամյանը: Վերջինս վկայել է, որ նույն բանտախցում եղած ժամանակ Շահուվարյանը պատմել է, որ իր տված «բոլոր ցուցմունքները եղել են կեղծ, ինչպես իր, այնպես էլ մյուս անձանց հանդեպ, որոնցից ոմանց հետ եղել է ծանոթ, իսկ ոմանց էլ՝ նույնիսկ անծանոթ, միայն իմացել է նրանց ազգանունները, որ ամեն ֆիզիկական ճշման ժամանակ տալիս էր նորանոր մարդկանց անուններ՝ նրանց մեղադրելով ծանր հանցագործությունների մեջ»⁶³: Վերը շարադրյալից զատ՝ Ա. Շահուվարյանի կարճված գործում բերված է 1954 թ. հուլիսի 1-ին իրականացված նրա ստորագրությունների քրեափորձագիտական լաբորատոր ստուգման եզրակացությունը՝ բժշկական ծառայության փոխգնդապետ Լեբեդևի ստորագրությամբ: Եզրակացության մեջ արձանագրված է, որ փորձաքննության է ենթարկվել տարբեր փաստաթղթերի տակ նրա անունից ստորագրված 11 դեպք: Պարզվել է, որ ստորագրությունների մի մասը չի համընկել կամ չի համապատասխանել Շահուվարյանի բնագիր (օրիգինալ) ստորագրությանը: Ըստ ամենայնի՝ դրանք կատարվել են ուրիշ անձանց կողմից՝ փորձելով նմանեցնել նրա բնագիր ստորագրությունը⁶⁴:

Կարճված ու արդարացված գործերի տարաբնույթ փորձաքննությունը ցույց է տալիս, որ հաճախ քննչական արձանագրությունները կազմել են իրենք՝ պետական հետաքննչական մարմինները և հետո ծեծով, սպառնալիք-խոշտանգումներով, հավասարակշռությունից հանելով՝ ստիպել են մեղադրյալին ստորագրել դրանց տակ կամ պարզապես կեղծելով ու նմանակելով՝ իրենք են ստորագրել:

Դրա վառ օրինակներից է ձերբակալության պահին ՀԽՍՀ հողժողկոմ Գ. Գումեդինի (Մելիք-Դադայանի) դատական գործը: Նրա հետմահու արդարացման կապակցությամբ Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Պետական անվտանգության կոմիտեի (ՊԱԿ) նախագահ, գնդապետ Բադամյանցի հսկողությամբ ու ստորագրությամբ գործի վերանայման և կարճման կապակցությամբ 1955 թ. պարզվել է, որ նրան անհիմն մեղաագրվել է հակահեղափոխականի-տրոցկիստի մեղադրանքը: Գործի նյութերից երևում է, որ Գ. Գումեդինին հարցաքննել են մեկ անգամ՝ 1937 թ. հոկտեմբերի 5-ին: Հարցաքննության ձեռագիր արձանագրությունը բացակայում է և՛ գործում, և՛ ՊԱԿ-ի արխիվում, և պարզ չէ անգամ, թե նման

61 Տե՛ս նույն տեղում, թ. 78:

62 Նույն տեղում, թ. 79:

63 ՀԱԱ, ֆ. 1191., ց. 1, գ. 81., թ. 290:

64 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 81, թ. 306-308:

հետաքննության փաստաթուղթ առհասարակ կազմվել է, թե՛ ոչ: Գ. Գումեդինի միակ հարցաքննությունը շարադրված է գրամեքենայով՝ 52 թերթ ծավալով: Բոլոր թերթերում կա նրա ստորագրությունը, իսկ արձանագրության վերջում դրված է հարցաքննող անձանց ստորագրությունը: Այստեղ կեղծվել է նրա ոչ միայն հարցաքննության տեքստը, այլև նյութեր այն մասին, թե իբր նա դիմում է գրել ՀԽՍՀ ՆԳ ժողկոմին, որ ինքը զբաղվել է հանցավոր գործունեությամբ, ընդգրկված է եղել հակահեղափոխական աջ-տրոցկիստական, ազգայնական կազմակերպության մեջ, և որ ինքը ընդունել է իր մեղքը: Սակայն ո՛չ գործում և ո՛չ էլ ՊԱԿ-ի արխիվում նման փաստաթուղթ չկա⁶⁵:

ԽՍՀՄ Գերագույն դատարանի գինվորական կոլեգիայի (տրիբունալի) արտագնա նիստում 1938 թ. սեպտեմբերի 16-ին գնդակահարության դատապարտված ՀԼԿԵՄ ԿԿ-ի նախկին քարտուղար ու նախկին հողժողկոմ Գուրգեն Գումեդինի հետմահու արդարացման նպատակով նրա գործի վերանայման ժամանակ 1955 թ. դատաբժշկական լաբորատոր և գծագրական (графический) փորձաքննությամբ պարզվել է, որ մի կողմից նա ենթարկվել է դաժան բռնությունների ու ծեծի, որի արդյունքում հայտնել է իբր Ա. Խանջյանի և Ս. Տեր-Գաբրիելյանի կողմից գլխավորած աջ-տրոցկիստական, ազգայնական կազմակերպության 44 անդամի անուն, իսկ մյուս կողմից՝ Գումեդինի ստորագրությունները իրար նման չեն, ինչպես որ ԿԿ-ի նախկին քարտուղար Ալ. Շահումվարյանինը և այդպես շատ-շատերինը: Կասկածելի է եղել նաև Գումեդինի ստորագրությունը հարցաքննության արձանագրության տակ, որովհետև երբ համեմատվել են նրա ստորագրությունները տարբեր փաստաթղթերի վրա, ակնհայտ է դարձել դրանց տարբերությունը և այլն⁶⁶:

Ասվածից հետևում է, որ 1930-ականների խորհրդային քննչական մարմինները հաճախ փաստորեն արձանագրել են միայն իրենց անհրաժեշտ ստորերը՝ իբրև հարցաքննության պատասխաններ, և վերջում արձանագրության տակ կեղծել ու նմանակել են մեղադրյալի ստորագրությունը: Այս հանգամանքն էլ է վկայում քաղաքական բռնաձնշումների ենթարկվածների անմեղության մասին:

Կան գործեր, ինչպես, օրինակ, արդեն ասվել է Գր. Վարդանյանի պարագայում, երբ մեղադրյալը մինչև վերջ իրեն մեղավոր չի ճանաչել: Հանդիպում են նաև իրենց մեղքը մասամբ ճանաչողներ, օրինակ՝ նախկին հողժողկոմ Գ. Գումեդինը⁶⁷: Ներքին գործերի և պետանվտանգության մարմինների քննիչները գործել են այնպես, որպեսզի որևէ կասկածյալի կամ ձերբակալվածի նկատմամբ մեղադրանք հարուցելու համար ցուցմունքներ հավաքեն բանտի մյուս խցերում գտնվող մեկ կամ մի քանի կալանավորներից և այսպես շարունակ՝ փակ օղակի տրամաբանությամբ: Խիստ կասկածելի են ցուցմունքների ստացման աղբյուրն ու հավաստիությունը նաև այն իմաստով, որ չեն պահպանվել քր. դատավարական օրենսգրքի պահանջները. գործերին կցված են եղել ոչ թե բնագիր ցուցմունքները,

65 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1785, թ. 171:

66 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1785, թ. 10-16, 171-178:

67 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1785, թ. 154:

այլ դրանց պատճենները: Կամ էլ հանդիպում են դեպքեր, երբ ցուցմունքների արձանագրության տեքստերում կատարված են ջնջումներ, ուղղումներ, և պարզ չէ, թե ովքեր են դրանք կատարել, ու այդպես շարունակ:

9. Դատական ատյանների և մի քանի բնորոշ դատավարությունների մասին

Քաղաքական մեղադրանքով գործերը ուղարկվում էին համապատասխան ատյան՝ գործը լսելու և դատավճիռ կայացնելու համար: 1930-ական թթ. ՀԽՍՀ-ի քաղաքացիների հանդեպ, որոնք ԽՍՀՄ սահմանադրությամբ միաժամանակ համարվում էին ԽՍՀՄ քաղաքացիներ, մեր ունեցած տվյալներով, դատախոսներ ու դատավճիռներ են կայացրել հետևյալ դատական մարմիններն ու արտակարգ հանձնաժողովները:

ԽՍՀՄ Գերագույն դատարանի դատական կոլեգիայի (տրիբունալի) արտագնա նիստը⁶⁸,

2. ԽՍՀՄ ՄՊՔՎ դատական կոլեգիայի նստաշրջանը,

3. ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի Եռյակը,

4. Անդրկովկասյան ԺԿԽ-ին կից ՊՔՎ դատական կոլեգիայի նստաշրջանը,

5. Անդրկովկասյան գինվորական օկրուգի ռազմական տրիբունալի արտագնա նստաշրջանը,

6. Անդրկովկասյան ՆԳԺԿ-ի Եռյակը,

7. ՀԽՍՀ ՊՔՎ դատական կոլեգիայի նստաշրջանը,

8. ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակը:

Վերը բերվածը, կարծում ենք, ոչ լրիվ ցանկն է: Ահա, թե մոտավորապես քանի դատական ատյաններ են իրականացրել քաղաքական բնույթի դատավարություններ: Մենք չենք խոսում քաղաքացիական, տնտեսական և այլ բնույթի գործեր վարող դատարանների մասին: Մշտական ու ժամանակավոր գործող այդ դատարանների բազմաշերտ ու հիերարխիկ կառուցվածքը ինքնին ցույց է տալիս, թե որքան դժվար է ներկայացնել քաղաքական բռնադատվածների ստույգ թիվը: Պետք է նկատի առնել, որ երբեմն դատական գործերի վարույթները, ըստ հանգամանքների ու կարևորության աստիճանի, մի ատյանից փոխադրվել են մյուսը:

Մեր դիտարկած դատական գործերը ավելի հաճախակի հանդիպում են ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի⁶⁹ և ԽՍՀՄ Գերագույն դատարանի գինվորական կոլեգիայի կամ տրիբունալի արտագնա նիստերում, որոնցում կայացված

68 Հիշյալ բարձրագույն դատական ատյանի մեջ մտնում էր գինվորական կոլեգիան կամ տրիբունալը (այն գործել է ԽՍՀՄ 60 քաղաքներում), որը բազմաթիվ արտագնա նիստեր է գումարել նաև Երևանում ու գնդակահարության դատավճիռներ կայացրել կուսակցական ու պետական նախկին շատ գործիչների հանդեպ: Ընդ որում, դատավճիռները կայացվել են ԽՍՀՄ անունից, մինչդեռ մեղադրանքը ներկայացվել է ՀԽՍՀ քր. օր.-ի հոդվածներով: Սա փաստորեն համարվում էր բարձրագույն դատական ատյանը:

69 **Եռյակների** ժամանակավոր դատարանները ստեղծվել էին 1937 թ. հունիսին Միության մասշտաբով բռնաճշումների գործը առանց իրավաբանական երկար-բարակ ձևակերպումների արագացնելու նպատակով: 1938 թ. սեպտեմբերից դրանց փոխարինելու եկան **Հատուկ եռյակները**, որոնք գործել են մինչև նույն թվականի դեկտեմբերի 1-ը: Իբրև «հատուկ դատարաններ» դրանց հիմնումը նախատեսված է եղել ԽՍՀՄ 1936 թ. սահմանադրությամբ (տե՛ս **Ղազալսեցյան Վլ.**, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006, էջ 501, **Ղազալսեցյան Վլ.**, 1937-ը Հայաստանում, Եր., 2004, էջ 40 և 51):

դատավճիռները գերազանցապես սահմանում էին մահապատիժ՝ անձնական ունեցվածքի բռնագրավումով՝ համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ-ի ընդունած «1934 թ. դեկտեմբերի 1-ի օրենքի»:

Այդ հանրահայտ օրենքի մասին միջանկյալ նշենք հետևյալը: Հայտնի է, որ 1934 թ. դեկտեմբերի 1-ին Լենինգրադում՝ Սմոլնիում, ատրճանակի գնդակով սպանվում է ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի անդամ, Լենինգրադի մարզկոմի և քաղկոմի քարտուղար Ս. Մ. Կիրովը: Կիրովի սպանությունից մի քանի ժամ անց Ի. Ստալինն իր ձեռքով, միանձնյա պատրաստում է ԽՍՀՄ ԿԳԿ-ի մի որոշում, որը ստանում է «**Գեկտեմբերի 1-ի օրենք**» անվանումը: Հիմք ընդունելով այդ սպանությունը, որը պաշտոնական վարկածով ներկայացվում է իբրև տրոցկիստի չարանենգ գործողություն (գոյություն ունի նաև ոչ պաշտոնական վարկած, որ դա կատարվել է խանդի հողի վրա⁷⁰), ինչպես նաև երկրում դասակարգային պայքարի սրումը՝ որոշվում է վճռական գործողությունների անցնել դասակարգային թշնամու դեմ: Դրա հիման վրա ԽՍՀՄ բոլոր հանրապետությունների քրեադատավարական օրենսգրքերում կատարվում է հետևյալ փոփոխությունը. ա) տեռորիստական ակտերի գործով հետաքննությունը ավարտել տասնօրյա ժամկետում, բ) մեղադրական եզրակացությունը մեղադրյալին հանձնել դատարանում գործը քննելուց մեկ օր առաջ, գ) գործը լսել առանց կողմերի մասնակցության, դ) թույլ չտալ բողոքարկում և ներման միջնորդություն և ե) գնդակահարության վճիռը ի կատար ածել հրապարակումից անմիջապես հետո⁷¹: Այդ օրենքը լայն դուռ բացեց հետագա բռնությունների ծավալման համար:

Մինչ դատավարության գործընթացներին անդրադառնալը հարկ է նշել, որ քաղաքական բռնաձնշումների մասով անցնող կուսակցական-պետական նախկին ղեկավար աշխատողների, գրողների, գիտության ու մշակույթի գործիչների հանդեպ (սկսած Ներսիկ Ստեփանյանից, ավարտված Վահան Թոթովենցով) հարուցված մեղադրական եզրակացություններում կարծես կարմիր թելի պես անցնում է կաղապարված ու շարունային բովանդակությամբ հետևյալ տիպական ձևակերպումը. «ՆԳԺԿ-ի մարմինները բացահայտել և վերացրել են Հայաստանի հակահեղափոխական, աջ-տրոցկիստական, ազգայնական-տեռորիստական կազմակերպություն կամ դրա որևէ մասնակից անձ (նշվում է անունը - Ա. Հ.), որն իր առջև վերջնական նպատակ էր դրել գինված ճանապարհով տապալել խորհրդային իշխանությունը, Հայաստանն անջատել ԽՍՀՄ-ից և ստեղծել, այսպես կոչված, «անկախ» ազգայնական-բուրժուական հայկական պետություն կապիտալիստական որևէ պետության (անունն էլ չի նշվում, թե որ պետության-Ա. Հ.) հովանավորության ներքո»⁷²:

Բերված անհեթեթ, անորոշ, անառարկա և կաղապարված այս ձևակերպման կապակցությամբ բավարարվենք միայն մեղադրանքի անհիմն

70 Համաձայն շրջանառվող վարկածի՝ ատրճանակի երեք կրակոցով սպանությունը կատարել է Ս. Կիրովի սիրուհիներից մեկի ամուսինը՝ Լ. Նիկոլանը, խանդի հողի վրա (տես История России XX век (1894-1939), отв. ред. **Зубов А. Б.**, М., 2009, էջ 945):

71 Տես **Хлебнюк О. В.**, Политбюро: механизмы политической власти в 1930-е гг., М., 1996, www.situation.ru/app/rs/Lib/Politburo/part 4. htm, էջ 1-2:

72 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 10, գ. 2030, թ. 58:

լինելն ապացուցող հետևյալ փաստով: Հայտնի է, որ տվյալ պատմա-
շրջանում Հայաստանի քաղաքական ընտրախավը՝ հայ կոմունիստ ղեկա-
վարությունը, բնավ ԽՍՀՄ-ից անջատվելու ձգտում չի ունեցել: Եթե, օրի-
նակ, վրաց կոմունիստ ազգայնականների՝ Բ. Միլվանիի, Ֆ. Սախարաձեի
կամ Ուկրաինայում՝ Մ. Սկրիպնիկի, Խ. Ռակովսկիի մոտ եղել են անջատա-
կան տրամադրություններ, ինքնորոշման իրավունքի պահանջով հանդես
գալու փորձեր, ապա հայ կոմունիստների պարագայում դա ըստ էության
բացառվում էր: Կարծում ենք, որ նման ձևակերպումով պատրաստի մեղա-
դրանքը հրահանգավորվում էր վերևից՝ ազգային հանրապետությունների
ղեկավարներին ու իրենց համար վտանգ ներկայացնող մտավորականներին
քաղաքական մեղադրանք ներկայացնելու, մեկուսացնելու ու վերացնելու
նպատակով:

Մեր կողմից դիտարկված կարճված և գաղտնազերծված գործերից
բերենք մի քանի առավել բնորոշ դրվագներ՝ ցույց տալու համար, թե ինչ-
պես են ընթացել դատավարությունները: Կրկին ներկայացնենք Գուրգեն
Խորենի Գումեղինի (Մելիք-Դադայանի) դատավարության առանձին
հատվածները: Նրա դատական գործը լսվել է Երևանում՝ ԽՍՀՄ Գերագույն
դատարանի գինվորական կոլեգիայի արտագնա նիստում: Հիշեցնենք, որ
հատուկ կարևորություն ունեցող և լրացուցիչ քննության կարիք զգացող
գործերը Եռյակից կամ մեկ այլ դատական ատյանից փոխանցվել են
ԽՍՀՄ Գերագույն դատարանի գինվորական կոլեգիա (տրիբունալ):

Գ. Գումեղինի մեղադրական գործի քննությունը սկսվել էր 1938 թ.
հուլիսի 19-ին և ավարտվել՝ հուլիսի 20-ին: Նա կալանքի տակ է եղել 1937
թ. սեպտեմբերի 18-ից և պահվել է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի ներքին բանտում: Գոր-
ծում իրեղեն ապացույցներ չեն եղել:

Ըստ դատական նիստի արձանագրության՝ գործի քննությունը սկսվել
է նշված զին. կոլեգիայի կողմից 1938 թ. հուլիսի 19-ին, նախագահ՝ Օռլով,
անդամներ՝ Կոլպակով, Ստելմախովիչ և քարտուղար՝ Կոզլով⁷³: Հուլիսի
20-ին հրավիրվել է զին. կոլեգիայի արտագնա նիստը՝ նույն կազմով:
Նիստը բացվել է ժամը 9:20-ին: Արձանագրության մեջ առկա են հետևյալ
կետերը.

- **Քարտուղարը զեկուցում է, որ մեղադրյալը բերվել է դատարան
և գործով վկաներ չեն կանչվել:**
- **Նախագահողը մեղադրյալին հարցնում է, թե արդյոք նրան
հանձնվել է մեղադրական եզրակացության պատճեն, ինչին
մեղադրյալը պատասխանել է դրական:**
- **Նախագահողի առաջարկով քարտուղարը հրապարակում է մե-
ղադրական եզրակացությունը, որից հետո նախագահողը մեղա-
դրյալին հարցնում է, թե նա արդյոք իրեն մեղավոր ճանաչում
է: Մեղադրյալը պատասխանում է, որ ինքը մասամբ է մեղավոր
ճանաչում:**
- **Հրապարակվում են հետաքննության ընթացքում հավաքված**

⁷³ Զինվորական կոլեգիայի սույն խումբը տևական ժամանակով գործուղված է եղել Երևան, և
շատերի՝ Եղիա Չուբարի, Օնիկ Դուրգարյանի և մյուսների գնդակահարության վճիռներն իրենք են
կայացրել:

ցուցմունքները, որոնք իբր հաստատում են, որ նա 1930 թվականից հավաքագրված է եղել Ս. Տեր-Գաբրիելյանի հակահեղափոխական կազմակերպության կողմից:

- Իր վերջին խոսքում մեղադրյալը խնդրում է հաշվի առնել, որ ինքը երիտասարդ է (ծնվ. 1902 թ. Գորիսում – Ա. Հ.) և խնդրում է խնայել իր կյանքը, որպեսզի հետագայում նա ապացուցի իր նվիրվածությունը խորհրդային իշխանությանը:
- Դատարանը հեռանում է խորհրդակցության և վերադառնում է:
- Նախագահը հրապարակում է դատավճիռը՝ Գուրգեն Խորենի Գումեդիինին դատապարտել քրեական պատժի առավելագույն չափով՝ գնդակահարության, անձնական ամբողջ գույքի բռնագրավումով: Համաձայն ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության 1934 թ. դեկտեմբերի 1-ի ընդունած որոշման՝ դատավճիռը վերջնական է և բողոքարկման ենթակա չէ: Նիստը փակվում է ժամը 9-նն անց 35-ին (այսինքն՝ դատավարությունը տևել է ընդամենը 15 րոպե):

Դատական նիստի արձանագրության վերջում դրված են նիստի նախագահ Օռլովի և քարտուղար Կոզլովի ստորագրությունները: Այնուհետև գործում բերված է զին. կոլեգիայի կայացրած դատավճռի արձանագրությունը: Նրանում նշված է, որ մեղադրյալը մեղադրվում է ՀԽՍՀ քր. օր.-ի 59, 64, 65, և 68 հոդվածներով, իբրև հիմնավորումներ ու ապացույցներ՝ բերված են մեղադրական եզրակացությունից ոչինչ չստղ, բանաձևի նմանվող հայտարարությունը՝ նրա իբր հակահեղափոխական, աջ-տրոցկիստական գործունեության մասին: Գործում կա նաև հույժ գաղտնի նշումով «Տեղեկանք», որ Գուրգեն Խորենի Գումեդիինի գնդակահարության վճիռը ի կատար է ածվել 16. IX. 1938 թ., ք. Երևանում և որ դատավճռի կատարման մասին ակտը պահվում է ԽՍՀՄ ՆԳԺԿ Հատուկ արխիվի 1-ին հատուկ բաժնում, հատ. նո. 8, թերթ թիվ 114: Վերջում դրված է ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի 12-րդ բաժնի 1-ին հատուկ բաժնի պետ, պետանվտանգության լեյտենանտ Շեվելևի ստորագրությունը⁷⁴:

Սովորաբար գնդակահարությունները կատարվել են խոր գիշերին՝ ժամը 2-ին: Այդ ժամը պատահական չէր ընտրված: Բժշկական հոգեվերլուծությունը ցույց է տվել, որ այդ ժամին մարդը գտնվում է դեպրեսիայի (հոգեկան լճացման) մեջ: Եվ բացի այդ՝ այդ ժամը նաև ամենախաղաղն է:

10. Բռնաճնշման ենթակա մարդկանց խմբաքանակների պլանավորումը

Բռնաճնշումների՝ զավեշտի հասնող դրսևորումներից մեկն էլ այն էր, որ վերևից՝ Կենտրոնից, առաջադրանք էր իջեցվում այս կամ այն հանրապետության ու մարզի համար, թե որքան «ժողովրդի թշնամի», տրոցկիստ, հակահեղափոխական, ազգայնական, և այլն պետք է ձերբակալվի և դատապարտվի 1-ին կատեգորիայով, այսինքն՝ գնդակահարության, և

74 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 2, գ. 1785, թ. 152-158:

2-րդ կատեգորիայով՝ բանտ ու աքսորի: Այլ խոսքով՝ պլանավորվում էր ոչ միայն ձերբակալման ենթակա մարդկանց չափաբաժինը, այլև թե նրանցից քանիսը պետք է գնդակահարվեն և որքանը՝ բանտարկվեն ու աքսորվեն: Խորհրդային համակարգի համար տնտեսության պլանավորումը հասկանալի էր, բայց որ մարդկանց կյանքը, նրանց լինել-չլինելն էր պլանավորվում, դա արդեն կարող էր բնորոշ լինել միայն բռնապետական համակարգին:

Հասկանալի է, որ նման առաջադրանք էր իջեցվել նաև Հայաստանի համար: Օրինակ՝ բռնաճնշումների բուռն շրջանում 1937 թ. հուլիսի 11-ին, ՀամԿ(բ)Կ ԿԿ-ն Հայաստանի համար իջեցրել էր 500 մարդու գնդակահարելու առաջադրանք⁷⁵: Բնականաբար հանրապետության կուսակցական ղեկավար մարմինները և նրանց անմիջական հրահանգներով գործող անվտանգության և դատախիրավական մարմինները ոչ միայն բարեխղճորեն, ստախանովյան ոգով պետք է կատարեին վերևից իջեցված ձերբակալությունների պլանային առաջադրանքները, այլև մարքսիզմ-լենինիզմի ու սոցիալիզմի գաղափարներին իրենց նվիրվածությունը ընդգծելու համար ավելի հաճախ վերադասին զեկուցեին «ժողովրդի թշնամիների» բացահայտման պլանների գերակատարման մասին:

«Ժողովրդի թշնամու» բացահայտման պլանի գերակատարման օրինակ են ցույց տալիս 1937 թ. սեպտեմբերի կեսերին Ի. Ստալինի հայտնի նամակով Հայաստան ժամանած ՀամԿ(բ)Կ ԿԿ-ի ղեկավար անդամներ Ա. Միկոյանը և Գ. Մալենկովը: Բանն այն է, որ Հայաստանի ԺԿԽ-ի նախկին նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանի՝ դարձյալ Ա. Խանջյանի վարկածին մոտ սպանությունից կամ ինքնասպանությունից հետո ՀԿ(բ)Կ ԿԿ-ի սեպտեմբերյան պլենումում ԿԿ-ի 1-ին քարտուղարի պաշտոնում Ա. Ամատունու փոխարինում է Գր. Հարությունյանը: Դրանից հետո, Ա. Միկոյանը և Գ. Մալենկովը սեպտեմբերի 22-ին գրություն են ուղարկում Մոսկվա՝ Ստալինին, և խնդրում, որ Հայաստանը թշնամական տարրերից մաքրելու համար «լրացուցիչ գնդակահարել 700 մարդ՝ դաշնակներից և այլ հակախորհրդային տարրերից, որ 1-ին կատեգորիայի թույլտվությունը՝ տրված 500 մարդու համար, արդեն սպառվում է»⁷⁶: Մոսկվա ուղարկված գրության պատասխանը չի ուշանում: Հայաստանին թույլատրվում է նույնիսկ գերակատարել պլանը և գնդակահարությունների թիվը հասցնել 1500-ի⁷⁷:

Այդ ժամանակների համար բնութագրական է, որ Ամատունու պաշտոնագրկումից հետո՝ սեպտեմբերյան այդ օրերին, Հայաստանի քաղաքական կյանքը փաստորեն տնօրինող Միկոյանին նամակով դիմել է Ե. Չարենցի կինը՝ Իզաբելան, ամուսնուն բանտից ազատելու հույսով: Բայց մեծանուն բանաստեղծին ազատելու փոխարեն կնոջն էլ են ձերբակալում⁷⁸: Իզաբելա Չարենցը 5 տարով աքսորվում է Ղազախստան՝ ամուսնու «գործը» թաքցնելու մեղադրանքով⁷⁹:

Այդ օրերին Ա. Միկոյանի և Գ. Մալենկովի հետ Հայաստան ժամանած

75 Տե՛ս Հարությունյան Գր., կյանքը և գործունեությունը, Եր., 2000, էջ 38:

76 Տե՛ս **Стецовский Ю.**, История советских репрессий, т. 1, М., 1997, էջ 66:

77 Տե՛ս նույն տեղում:

78 Տե՛ս **Գասպարյան Դ.**, Փակ դռների գաղտնիքը, Եր., 1994, էջ 35:

79 Տե՛ս **Ղազախցյան Վլ.**, 1937-ը Հայաստանում, Եր., 2004, էջ 27:

ԽՍՀՄ ՆԳԺԿ քննիչների խմբի ղեկավար Լիտվինը անգործ չէր մնացել: Նա հոկտեմբեր ամսին Հայաստանում իր մեկ ամսվա գործունեության մասին 45 էջանոց ընդարձակ զեկուցագիր էր ներկայացրել, որում նշված էր իր բրիգադի կողմից 1183 մարդու, այդ թվում՝ 936 «դաշնակցականների», ձերբակալության մասին: Նրա տեղեկացմամբ՝ ձերբակալվածներից 500-ը այդ մեկ ամսում դատապարտվել է 1-ին կատեգորիայով՝ գնդակահարության, որն արդեն ի կատար է ածվել⁸⁰:

Ձերբակալությունների լիմիտավորման գործընթացը շարունակվել է նաև հաջորդ տարի՝ 1938 թվականին: ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոյի՝ հունվարի 31-ի «Հակախորհրդային տարրերի մասին» նոր որոշումով հանձնարարական էր իջեցվել հանրապետություններին ու մարզերին, այդ թվում՝ Հայաստանին: Պլանով՝ Հայաստանի համար նախատեսվում էր 1000 մարդ՝ 1-ին կատեգորիայով (գնդակահարություն) և ևս 1000 մարդ՝ 2-րդ կատեգորիայով՝ բանտ և աքսոր⁸¹: Արդյունքում՝ Մոսկվայից իջեցված 1938 թ. առաջադրանքը ոչ միայն կատարվել, այլև գերակատարվել է. 2000-ի փոխարեն ձերբակալվել է 3153 մարդ, որից 1390-ը գնդակահարվել է, մյուսները՝ դատապարտվել են բանտարկության և աքսորի 3-10 տարով:

Պրոֆ. Վ. Ղազախեցյանի տվյալներով՝ բռնաձնշումների գագաթնակետը համարվող 1937-1938 թթ. երկու տարում Խորհրդային Հայաստանում բռնադատվածների ընդհանուր թիվը կազմել է 8084 մարդ⁸²: Այդ թիվը գրեթե համընկնում է Ա. Մանուկյանի հայտնած թվին՝ 8104⁸³:

11. Նկատառումներ Ա. Ամատունու գործի վերաբերյալ

1936-1938 թթ. զանգվածային բռնաձնշումների առավել բարձր փուլում Ա. Խանջյանի սպանությունից հետո, մեկ տարով (1936 թ. սեպտեմբեր - 1937 թ. սեպտեմբեր), հանրապետության կուսակցական ամենաբարձր պաշտոնը զբաղեցրել է Ա. Ամատունին, որը ևս արժանացել է նույն ձակատագրին, ինչպես որ կուսակցական-պետական մյուս ղեկավարները: ՀԿ(Բ) Կ ԿԿ-ի 1-ին քարտուղար Ամատունի Վարդապետյան Ամատունի Սեմյոնին⁸⁴ ձերբակալվել է ՀԿ(Բ) ԿԿ-ի 1937 թ. սեպտեմբերյան հանրահայտ պլենումից մի քանի օր անց՝ սեպտեմբերի 25-ին:

Ինչպես արդեն ասվել է, այդ շրջանի քաղաքական բռնությունների պարադոքսն ու անհեթեթությունն այն էր, որ ձերբակալված Ա. Ամատունուն և նրա առավել նեղ շրջապատին ներկայացված մեղադրանքը, իր ձևակերպմամբ, ըստ էության չի տարբերվել իր նախորդներին՝ Ա. Խանջյանին, Ս. Տեր-Գաբրիելյանին և նախկին կուսակցական-պետական ղեկավար գործիչներին վերագրված մեղադրանքներից: Այսպես՝ Ամատունու ձերբակալման համար ներկայացված մեղադրանքը ձևակերպված է հետևյալ կերպ. «Ամատունին հանդիսանում է Հայաստանի հակախորհրդային ազգայնական, աջ-տրոցկիստական կազմակերպության ղեկավար մասնակից՝ իր

80 Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Եր., 2002, էջ 143-144:

81 Տե՛ս **Ղազախեցյան Վ.**, 1937-ը Հայաստանում, Եր., 2004, էջ 45:

82 Տե՛ս նույն տեղում, էջ 49:

83 Տե՛ս **Մանուկյան Ա.**, Քաղաքական բռնաձնշումները Հայաստանում 1920-1953 թթ., Եր., 1999, էջ 38:

84 Իսկական անուն-ազգանունն է՝ Ամատունի Վարդապետյան: Հետագայում փոխել է Վարդապետյան ազգանունը՝ դարձնելով Ամատունի:

առջև նպատակ դնելով Խորհրդային Հայաստանը անջատել ԽՍՀՄ-ից, այն է՝ մի հանցագործություն, որը նախատեսված է քր. օր.-ի 58/2 և 58/11 հոդվածներով: Խափանման միջոց համարել բանտարկություն: Համաձայն եմ Ամատունի (ստորագրություն)»⁸⁵:

Առաջադրված մեղադրանքի կապակցությամբ կարելի է ներկայացնել հենց Ամատունու ղեկավարման մեկ տարվա ընթացքում ձերբակալությունների ու դատական եզրակացությունների տասնյակ ու հարյուրավոր գործեր, որոնք ունեցել են գրեթե նույն ստանդարտ բովանդակությունը: Այս փաստը մեկ անգամ ևս հաստատում է այն միտքը, որ կուսակցական-պետական այս կամ այն գործչի հանդեպ գործադրված ռեպրեսիաները բնավ կախված չեն եղել Հայաստանի այն ժամանակվա ղեկավարների կամքից՝ լինել Խանջանը, Ամատունին կամ Հարությունյանը: Եվ այդ իմաստով, կարծում ենք, տեղին ու արդարացի չէ բռնաձնշումների գործում քավության նոխազ դարձնել այս կամ այն ղեկավարին՝ տվյալ դեպքում Ամատունուն, ինչը մեր հանրային ընկալման մեջ շատ է տարածված: Ռեպրեսիաները չի կարելի կապել միութենական կամ հանրապետական մակարդակի այս կամ այն ղեկավարի նախասփրության կամ դաժան բնավորության հետ: Դա եղել է կոմունիստական կուսակցության քաղաքական կուրսը, այն է՝ իրար մատնելով, ժողովրդի ու դասակարգային թշնամի բացահայտելով ու վերացնելով՝ ձանապարհի հարթել միատարր սոցիալիստական ու կոմունիստական հասարակարգի հաղթանակի համար: Այդ իմաստով կեղծ ու պարզունակ է այն դատողությունը, թե իբր կարիերիստ Ամատունին աչք էր դրել Խանջանի աթոռին, դրա համար էլ վերացնել տվեց նրան:

Անգամ Խանջանի ինքնասպանությունը կամ սպանությունը այնքան էլ հիմնավոր ու համոզիչ չէ վերագրել միայն չարագործ Բերիային: Դրանում առաջին հերթին մեղավոր էր ձևավորված համակարգը, ստեղծված հասարակական-քաղաքական գաղջ մթնոլորտը: Հարցաքննությունների ընթացքում Ամատունին էլ է բազմիցս «խոստովանել», որ ինքը Բաքվում եղել է տրոցկիստական խմբի ղեկավար⁸⁶, այն տարբերությամբ, որ եթե ինքը եղել է աջ-տրոցկիստ, ապա Խանջանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ն. Ստեփանյանը՝ տրոցկիստ **ազգայնական**: Խանջան-Ամատունի հակամարտության պարադոքսն ու անհեթեթությունն այն է, որ երկուսն էլ մեղադրվել են որպես հակախորհրդային տրոցկիստական կազմակերպությունների ղեկավարներ:

Ամատունու հարցաքննության ընթացքում արված բացահայտումներից մեկն էլ այն էր, որ ոչ ավել, ոչ պակաս պարզվել է, որ ՆԳԺԿ Խ. Մուղդուսին էլ է եղել «Խանջանի գլխավորած հակախորհրդային ընդհատակյա ազգայնական կազմակերպության ակտիվ անդամ»⁸⁷: Ստացվում էր, որ Մուղդուսին էլ է եղել **ազգայնական**, այն դեպքում, երբ ամեն մի ազգայնականի համարում (պիտակ) ունեցողներին հենց իր հրահանգով էին տանում կառափնարան: Սա էլ հերթական զավեշտն էր:

Հարցաքննությունների արձանագրություններից «պարզվում է», որ

85 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 1:

86 Տես ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 19-20, 30, 52:

87 Նույն տեղում, թ. 64:

Ամատունու գլխավորած հակախորհրդային տրոցկիստական կազմակերպության մեջ ընդգրկված են եղել ԺԿԽ-ի նախագահ Աբրահամ Գուլոյանը, ԿԿ-ի 2-րդ քարտուղար Ստեփան Ակոբովը, ԺԿԽ-ի նախագահի տեղակալ և Երքաղխորհրդի նախագահ Ալ. Շահսուվարյանը, Հայաստանի նախկին Լուսժողկոմ Լ. Արիսյանը և ուրիշներ⁸⁸: Հարցաքննություններից մեկի ժամանակ պատասխանելով քննիչների հարցին՝ Ս. Ակոբովը հայտնել է, որ իրենց «հակախորհրդային-տրոցկիստական կազմակերպության վերջնական նպատակը Հայաստանի անջատումն էր ԽՍՀՄ-ից և բուրժուազգայնական Հայաստանի ստեղծումը արևմտաեվրոպական որևէ պետության հովանավորության տակ»⁸⁹: Փոքր-ինչ այլ ձևակերպմամբ՝ այդ նույն միտքն է «պնդել» խմբի անդամ, Երքաղխորհրդի նախագահ Ալ. Շահսուվարյանը⁹⁰: Ավելի վաղ՝ 1937 թ. փետրվարի 13-ին, ԺԿԽ-ի նախագահի նախկին տեղակալ (1931-1935 թթ.) Ա. Երզնկյանը հարցաքննությամբ հայտնել է, որ իբր 1931 թ. ստեղծված հակահեղափոխական-ազգայնական խմբի, որի մեջ ընդգրկված է եղել նաև ինքը, գործունեության հիմքում դրված են եղել «հայկական հակահեղափոխական դաշնակների կուսակցության դրույթները: Ավելին, ես պնդում եմ, որ մեր խումբը, ըստ էության, եղել է դաշնակների կուսակցության գործակալը Հայկունկուսի շարքերում»⁹¹:

1938 թ. Բուտիրյան հայտնի բանտում հայտնված Ամատունու մեղադրական եզրակացության հիման վրա, որն ունի մեղադրանքի նույն բովանդակությունը՝ հաստատված ԽՍՀՄ գլխավոր դատախազ Ա. Վիշինսկու կողմից, հաջորդ օրը՝ հուլիսի 28-ին Մոսկվայում ԽՍՀՄ Գերագույն դատարանի գինվորական կոլեգիայի (տրիբունալի) արտագնա 20 րոպե տևողությամբ փակ նիստում կայացվում է դատավճիռ՝ պատժի առավելագույն չափով՝ գնդակահարություն: Այն ի կատար է ածվել նույն գիշերը:

Ա. Ամատունու գործում հատկանշականը նաև այն է, որ մեծ նմանություն կա Ա. Խանջյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի և Ամատունու հանդեպ հարուցված մեղադրանքներում: Սակայն մինչ օրս հասարակական ընկալումներում բոլորովին այլ են մոտեցումներն ու գնահատականը այդ երեք գործիչների հանդեպ: Առաջին երկուսի կուսակցական-պետական արգասաբեր գործունեությունը վկայում է նրանց ազգային նկարագրի մասին, իսկ Ամատունու վերաբերյալ հանրային ընկալումը մնում է բացասական: Ամատունու գործունեության մեջ առավել վարկաբեկիչ է 1937 թ. ամռանը Ստալինին ուղղված զեկուցագրերից մեկը, որում նա սուր մեղադրանքներ է ներկայացնում «նացիոնալիստներ» Ա. Խանջյանի, Ս. Տեր-Գաբրիելյանի, Ա. Հովհաննիսյանի և հանրապետության մյուս նախկին ղեկավարների հասցեին, իսկ վերջում հայտնում է, որ իր ղեկավարման տասը ամիսներին Հայաստանում ձերբակալվել է 1365 մարդ, որից 900-ը դաշնակ-տրոցկիստներ⁹²: Պատահական չէ, որ ժամանակին (1977 թ.) Ամատունու դատական գործի վերանայման հարց է բարձրացվել ԽՍՀՄ Գերագույն դատարան, սակայն նրա արդարացման վերաբերյալ որևէ որոշում չկա⁹³:

88 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 83, 85, 87:

89 Նույն տեղում, թ. 87:

90 Տե՛ս նույն տեղում, թ. 108-110, տե՛ս նաև ֆ. 1191, ց. 1, գ. 81, թ. 1 և 16:

91 ՀԱԱ, ֆ. 1191, ց. 1, գ. 78, թ. 37:

92 Տե՛ս «Բանբեր Հայաստանի արխիվների», Եր., 2003, N 2, էջ 75-79:

93 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 12, գ. 2114, թ. 213-217:

Միակողմանի չլինելու համար նշենք, որ «մեծ առաջնորդին» նամակներ են գրել շատերը, դրանց թվում տեղին է հիշատակել ԺԿԽ-ի նախագահի տեղակալի իր պաշտոնից գրկված ու նեղացած Ար. Երզնկյանի՝ 1935 թ. օգոստոսին Ստալինին (պատձենը՝ Բերիային) ուղղված նամակը, որում նա սուր քննադատում և ազգայնականության մեջ էր մեղադրում ԿԿ-ի 1-ին քարտուղար Ա. Խանջյանին, «Գիրք ճանապարհի» հեղինակ Չարենցին և մյուսներին՝ խնդրելով հանձնաժողով ուղարկել և քննության առնել Հայաստանում ստեղծված կացությունը⁹⁴: Տարակույս չկա, որ նման նամակ-դիմումները արդեն կանխորոշում էին Խանջյանի և Չարենցի ձակատագրերը: Ասվածից հետևում է, որ այնպես չէ, թե քաղության նոխազ պետք է դարձնել միայն Ամատունու կամ Մուղդուսու նման գործիչներին:

12. Մի դրվագ Աբրահամ Գյուլխանդանյանի եղբոր դատական գործից

Ուշադրության է արժանի մի անհատական գործ, որը կապված է Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի և ՀՅԴ ճանաչված գործիչ Աբրահամ Գյուլխանդանյանի եղբոր՝ Անդրեյ (Անդրուշ) Իսահակի Գյուլխանդանյանի հանդեպ իրականացված հաշվեհարդարի հետ:

1875 թ. Վաղարշապատում ծնված Անդրեյ Գյուլխանդանյանի քր. գործից տեղեկանում ենք, որ դեռ 1920-ական թվականներից պետանվտանգության գաղտնի ծառայողները հետևել են նրա գործողություններին: 1935 թ. օգոստոսի 8-ին պետանվտանգության գաղտնի քաղաքական բաժնի (секретно-полит. отдел) 3-րդ բաժանմունքի պետ Օհանովը գործակալական ճանապարհով պարզել է, որ Անդրուշը հաճախակի եղել է Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Մուրադբեկյանի մոտ, նրանից ստացել է թերթեր, խոսել Հայկական հարցի շուրջ: Օհանովն այդ տեղեկությունները ստացել է պետանվտանգության մարմինների կողմից հավաքագրված գործակալ, եպիսկոպոս Զուլոյանից: Նշված է, որ Անդրեյը կիրակի օրերին լինում էր Վեհափառի մոտ, ճաշում՝ նրա հետ⁹⁵:

Դարձյալ գործակալական ճանապարհով 1937 թ. ապրիլի 10-ին (այս անգամ նշված է «Զաքարիա» կեղծանունով հոգևորական), նորից տեղեկություն է հաղորդվել Անդրեյ Գյուլխանդանյանի մասին: Դրանից հետո մայիսի 16-ից ՆԳԺԿ-ը անցել է կոնկրետ գործողությունների: Նույն օրը նրա բնակարանում կատարվել է խուզարկություն⁹⁶:

Մայիսի 17-ին և 25-ին կատարվել են հարցաքննություններ, որոնց հիման վրա արձանագրվել է, որ նա մասնակցել է 1921 թ. Փետրվարյան ապստամբությանը, որից հետո չեկան նրան ձերբակալել է: Սակայն մեկ ամիս անց (հավանաբար 1921 թ. ապրիլի 24-ի համաներման դեկրետով) ազատ են արձակել (Անդրեյ Գյուլխանդանյանը անկուսակցական էր): Այնուհետև չեկիստները պարզել են, որ նա կապեր է ունեցել Փարիզում գտնվող իր եղբայր Աբրահամ Գյուլխանդանյանի հետ: 1934 թ. Խ. Մուրադբեկյան կաթողիկոսի կողմից արտասահման գործուղված Գարեգին արք.

94 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 571, ց. 5, գ. 207, թ. 12-21:

95 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 13, գ. 1313, թ. 3:

96 Տե՛ս նույն տեղում, թ. 4-6:

Հովսեփյանի միջոցով Աբրահամ Գյուլխանդանյանը իր եղբորը՝ Անդրեյին, սափրվելու պարագա («լեզվի») է ուղարկել: Բացի այդ՝ վերջինս մտերիմ է եղել կաթողիկոսի հետ: Վերջում նշվում էր, որ կաթողիկոսն օգնել է ձերբակալված ու արքայազն դաշնակցական ընտանիքներին և այլն:

Բերված տվյալներից կարելի է հետևություն անել, որ հետապնդել են ոչ միայն Անդրեյին, այլև հետևել են Խորեն կաթողիկոսի գործողություններին: Սա նշանակում էր, որ արդեն մութ ամպեր էին կուտակվել նաև Վեհափառի գլխին, ինչի հետևանքով էլ, ի վերջո, 1938 թ. ապրիլին, ըստ ամենայնի՝ պետանվտանգության աշխատակիցների կողմից, խեղդամահ արվեց Հայոց հայրենասեր ու ազգանվեր կաթողիկոսներից մեկը:

Ինչ վերաբերում է Անդրեյ Գյուլխանդանյանի քր. գործին, ապա պետանվտանգության քննիչները կազմել են մեղադրական եզրակացություն: Դրանում, բացի զավեշտ առաջացնող մի անմեղ «լեզվի» պատմությունից, քաղաքական երանգ տալու նպատակով արձանագրված է, որ նա՝ Անդրեյը, անհրաժեշտ է համարել Հայաստանին միացնել նախկին Թուրքահայաստանը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղը, Նախիջևանը և Ախալքալաքի շրջանը:

Գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի քննությանը, որի 1937 թ. օգոստոսի 31-ի նիստում՝ նախագահությամբ ՆԳԺԿ, պետանվտանգության մայր Խ. Մուղդուսիի, անդամներ՝ ՀԽՍՀ դատախազի տեղակալ Ս. Միքայելյանի, ՀԽՍՀ Գերագույն դատարանի հատուկ կոլեգիայի նախագահ Ս. Տեր-Նակալյանի և Եռյակի քարտուղար, պետ. անվ. լեյտենանտ Կոնստ. Գրիգորյանի, «դատավարություն» է անցկացվել ցուցակով ներկայացված 52 մեղադրյալների դեմ: Այդ ցուցակում մեղադրյալ անձանցից թիվ 8-րդը եղել է Ա. Գյուլխանդանյանը: Բոլոր 52 մեղադրյալներից 41-ը, այդ թվում նաև Ա. Գյուլխանդանյանը, որակվել են ակտիվ դաշնակցական, հակահեղափոխական, քայքայիչ աշխատանքներ վարող և այլն ու դատապարտվել են պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության⁹⁷: Գնդակահարությունն ի կատար է ածվել սեպտեմբերի 2 - լույս 3-ին, ժամը 2-ին⁹⁸:

Հետագայում՝ տասնամյակներ անց, ԽՍՀՄ փլուզման փուլում՝ 1989 թ. սեպտեմբերի 25-ին, Հայկ. ՍՍՌ դատախազ Վլ. Նազարյանի հաստատմամբ՝ Անդրեյ Գյուլխանդանյանի քր. գործը կարճվել է, և նա հետմահու արդարացվել է⁹⁹: Սրանք գործեր են, որոնց հետևում թաքնված են հազարավոր անմեղ մարդկանց ողբերգական ճակատագրեր:

13. Մի քանի դիտարկումներ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի կազմակերպած դատավարությունների մասին

Բռնաճնշումների երկար շարքում առավել զանգվածային բնույթ են ունեցել Եռյակների կողմից անցկացված «դատավարությունները»: Բանն այն է, որ դրանք շատ արագ էին իրականանում, առանց մեծ ճիգ ու ջանքի, այն էլ ամբողջական ցուցակներով: ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի նիստերի

97 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 36, թ. 52, 54, 73, տե՛ս նաև ց. 13, գ. 1313, թ. 15:

98 Տե՛ս նույն տեղում, ց. 13, գ. 1313, թ. 17:

99 Տե՛ս նույն տեղում, թ. 19:

արձանագրությունների նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա կազմակերպած լուսնների և ընդունած վճիռների ճնշող մեծամասնությունը քաղաքական բնույթի մեղադրական գործեր են եղել: Ընդ որում, գործերը կազմում և Եռյակին էին ուղարկում ՆԳԺԿ-ի շրջանային և քաղաքային բաժինները:

Ներկայացված քր. գործերում մեղադրյալներին ներկայացվող ամենից ավելի տարածված քաղաքական մեղադրանքներն էին՝ **հակախորհրդային, թշնամական վնասարար տարր, նախկին դաշնակցական, ընդհատակյա կազմակերպությունների ու ժողովների մասնակից կամ նրանց հետ կապեր ունեցող, 1921 թ. Փետրվարյան ապստամբության (ավանտյուրայի) մասնակից, հակակոլտնտեսային վնասարար, կուլակային տարր, նախկին խմբապետ, ավագակային (բանդիտական) խմբի ղեկավար կամ անդամ, տրոցկիստ-ահաբեկիչ** և այլ բնութագրումներ: Ահա հիմնականում նման որակումներով են մարդկանց ենթարկել տարբեր պատիժների, իսկ ավելի հաճախ՝ գնդակահարության: Տեղեկացնենք, որ արդեն սահմանված կարգով մահապատժի վճիռների տվյալները գրավոր ներկայացվում էին Կենտրոն՝ ԽՍՀՄ ՆԳԺԿ-ի Պետանվտանգության գլխավոր վարչության 8-րդ բաժին՝ իբրև գաղտնագիր լրացնելով թիվ 1 ձևի քարտը «K» սերիայով, այսինքն՝ գնդակահարություն: Հաշվետվության ձևով ուղարկված քննչական գործերը նշված էին ծածկագիր համարներով, օրինակ՝ 19085, 19622, 19333 և այլն: Այսինքն՝ ամեն գնդակահարվածն ուներ իր ծածկագիր համարը:

Բացի քաղաքական բռնադատվածներից՝ **Հայաստանի Ազգային արխիվի** մեր դիտարկած **1191 ֆոնդի 19 ցուցակներից** բաղկացած տասնյակ հազարավոր գործերում Եռյակի անցկացրած նիստերում լսվել ու վճիռներ են կայացվել նաև ոչ քաղաքական բնույթի հանցագործությունների կապակցությամբ՝ սպանության, գողության, խուլիգանության, գրպանահատության, կրկնահանցագործության (ռեցիդիվիզմ), անասնազողության, թմրամոլության և այլն: Սա նշանակում է, որ բոլոր բռնադատվածները չէ, որ եղել են քաղաքական շարժառիթներով դատվածներ, և անհիմն ռեպրեսիաների զոհերի թիվը հաշվարկելիս այդ հանգամանքը պետք է հաշվի առնել:

Ջուտ քաղաքական և քրեական բնույթի գործերը լսվել են ամբողջական խմբերով, տասնյակների հասնող ցուցակներով, ավելի հաճախ՝ տարբեր օրերի ու տարբեր նիստերում: Սակայն եղել են Եռյակի նիստերի առանձին օրեր, երբ մի օրում տեղի է ունեցել է մի քանի, մինչև իսկ 5-6 նիստ: Բայց և հանդիպում են նիստեր, երբ քաղաքական և սովորական քրեական բնույթի մեղադրական գործերը լսվել են նույն նիստում՝ խառը ձևով, ինչը դժվարացնում է ճիշտ սահմանազատել ու հաշվարկ կատարել անհիմն բռնադատվածների վերաբերյալ: Եվ այդ իմաստով ճիշտ է նկատել Ա. Մանուկյանը, երբ նշում է, որ բռնադատվածների ցուցակներում ընդգրկված են նաև այլ քր. հոդվածներով դատվածներ և քաղաքական բռնաձնշվածների ստույգ թվաքանակը ճշտելու տեսակետից՝ դժվար է դրանք սահմանազատել իրարից¹⁰⁰:

100 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 36, թ. 38:

Հիմքեր կան պնդելու, որ խորհրդային երկրում բավականին խիստ են եղել նաև սովորական քրեական գործերով հարուցվող մեղադրանքները և դրանց համար սահմանված պատժաչափերը, որոնք ևս երբեմն ավարտվել են գնդակահարության վճիռներով: Խորհրդային երկրում ընդհուպ՝ գնդակահարությունների միջոցով խնդիր էր դրված վերացնել քաղաքական ու քրեական բոլոր հակախորհրդային տարրերին: Բանն այն է, որ, ինչպես արդեն քանիցս ասվել է, սոցիալիզմի կառուցմամբ և սահմանադրության ընդունմամբ՝ հակախորհրդային ու ապադասակարգային համարվող ոչ մի տարր չպետք է մնար: Ինչպես նշված էր հաղթանակած սոցիալիզմի ստալինյան համարվող սահմանադրության մեջ, պետք է լինեին բանվոր դասակարգ, կոլտնտեսային գյուղացիություն և խորհրդային մտավորականություն:

Ընթերցողի ուշադրությունը թվական տվյալներով շատ չծանրաբեռնելու համար որպես տիպական օրինակ բերենք մի քանի ամփոփիչ թվեր Եռյակի դատական լուսններից ու դատավճիռներից: Մեր ունեցած տվյալներով՝ բռնաձնշումների ամենաբարձր ամիսները կարելի է համարել 1937 թ. նոյեմբեր – 1938 թ. փետրվար ժամանակահատվածը: Դա համընկնում էր Գրիգոր Հարությունյանի (Արութինովի) Հայկումկուսի ԿԿ-ի 1-ին քարտուղար ընտրվելու սկզբնափուլի հետ:

Մեր դիտարկած ժամանակահատվածում Եռյակում ընդգրկված են եղել նախագահ՝ ՆԳԺԿ **Վիկտոր Խվորոստյանը**, անդամներ՝ ՀԿ(բ)Կ ԿԿ-ի 1-ին քարտուղար **Գրիգոր Հարությունյանը** և ՀԽՍՀ դատախազ **Արամ Հարությունովը**: Հենվելով Եռյակի նիստերի արձանագրությունների վրա՝ ներկայացնենք նոյեմբեր ամսվա որոշ տվյալներ: ՆԳԺԿ Եռյակի 1937 թ. նոյեմբերի 5-ի նիստում վերը ներկայացված կազմով լսել են հանրապետության ՆԳ շրջանային և Երևանի ու Լենինականի քաղաքային բաժիններից ուղարկված 124 անձանց գործեր, որոնցում հիմնականում մեղադրանք էր ներկայացված հակախորհրդային գործունեության, դաշնակցական լինելու, այդ կուսակցության հետ սերտ կապեր ունենալու, «Փետրվարյան ավանտյուրային» մասնակցելու, հակակոլտնտեսային գործողությունների և այլնի կապակցությամբ: Եռյակը անվարան կերպով բոլորի հանդեպ կայացրել է գնդակահարության վճիռ՝ նրանց անձնական գույքի բռնագրավումով: Զարմանալ կարելի է, թե ինչպես է հնարավոր մեկ նիստում լսել 124 մարդկանց լինել-չլինելու հարցը վճռող գործեր: Ինքնին հասկանալի է, որ նման նիստերը եղել են ձևական, քանզի կանխավ արդեն վճռված է եղել նրանց ձակատագիրը: Նշված 124 մահվան դատապարտյալների վերաբերյալ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի պետանվտանգության 8-րդ բաժնի պետ, պետանվտանգության լեյտենանտ Կ. Գրիգորյանը անմիջապես թիվ 1 ձևի, այսինքն՝ գնդակահարության քարտով, «K» սերիա նշումով, ծածկագիր համարներով հաշվետվություն է ուղարկել ԽՍՀՄ ՆԳԺԿ պետանվտանգության գլխավոր վարչության 8-րդ բաժնի պետ, պետանվտանգության մայոր Ցեսարսկուն¹⁰¹:

Եռյակի 1937 թ. նոյեմբերի 9-ի նիստի արձանագրության տվյալներով, նույն կազմով, Ն. Գ. շրջանային բաժինների կազմած գործերով, դատա-

101 Տե՛ս Մանուկյան Ա., նշվ. աշխ., էջ 7:

վճիռ է կայացվել 25 անձի հանդեպ: Նշված 25-ից 18-ի վերաբերյալ կայացվել է գնդակահարության վճիռ, իսկ 7-ի՝ 10 տարվա բանտարկության՝ Ուղղիչ աշխատանքային ճամբարում (ՈւԱՃ) (Исправительный трудовой лагерь) (ИТЛ):

Նույն Եռյակը 1937 թ. նոյեմբերի 11-ին լսել է 17 հոգու դատական գործ, որից 14-ի հանդեպ կայացրել է գնդակահարության վճիռ, իսկ 3-ին՝ 10 տարով քարո (ՈւԱՃ)¹⁰²: Դրանց վերաբերյալ դարձյալ թիվ մեկ քարտով և ծածկագիր համարներով գեկուցվել է Ցեսարսկուն:

Եռյակի հաջորդ՝ 1937 թ. նոյեմբերի 14-ի նիստում դատավճիռ է կայացվել ընդամենը 43 անձի հանդեպ, որից 36-ը գնդակահարվել է, իսկ 6-ը՝ բանտարկվել 10 տարով (ՈւԱՃ)¹⁰³: Նույն օրվա՝ նոյեմբերի 14-ի նիստում կա ևս 30 հոգու վերաբերյալ դատավճիռ՝ ցուցակով, 4-ինը գնդակահարություն, իսկ 26-ինը համեմատաբար ավելի մեղմ՝ 8 և 10 տարի ժամկետներով քարո՝ (ՈւԱՃ):

Եռյակի հաջորդ՝ 1937 թ. նոյեմբերի 15-ի նիստում վճիռ է կայացվել 88 մեղադրյալի հանդեպ, բոլորն էլ շրջաններից՝ Վաղարշապատի, Մարտունու, Ղամաբլուի, Իջևանի և այլն ՆԳ շրջանային բաժինների պատրաստած նյութերով: Եռյակը բոլոր 88-ին էլ դատապարտել է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության՝ անձնական գույքի բռնագրավումով: Ընդ որում, առաջադրված մեղադրանքը դարձյալ եղել է նույնաբնույթ որակումներով՝ «դաշնակների ընդհատակյա կազմակերպություններին ու դրանց ժողովներին մասնակցություն, դաշնակ անդամ, դաշնակների ավանտյուրային, հակակոլխոզային պայքարին մասնակից»¹⁰⁴ և այլն:

1937 թ. նոյեմբերի 15-ի նիստում լրացուցիչ լսվել է ևս 169 անձի գործ՝ դարձյալ շրջանների ՆԳ բաժիններից ուղարկված: 150-ի հանդեպ եղել է գնդակահարության վճիռ՝ անձնական գույքի բռնագրավումով, իսկ 19-ինը՝ 10 տարով քարո համակենտրոնացման ճամբար (ՈւԱՃ): Գնդակահարվածներից մի քանիսը ազգությամբ եղել են թուրքեր, ովքեր զբաղվել են անասնագողությամբ, խախտել են սահմանը և այլն¹⁰⁵:

Դարձյալ նույն կազմով Եռյակի 1937 թ. նոյեմբերի 29-ի նիստում լսվել է 148 անձի գործ և բոլորի հանդեպ կայացվել է 10 տարվա բանտարկության վճիռ (ՈւԱՃ): Ուշադրության է արժանի այն, որ այս անգամ գնդակահարության վճիռ չի կայացվել¹⁰⁶: Կարելի է ենթադրել, որ Եռյակը «ներողամիտ» է եղել՝ գուցե հաշվի առնելով, որ նոյեմբերի 29-ը համարվել է Հայաստանի խորհրդայնացման օրը: Վերոնշյալ բոլոր արձանագրությունների տակ դրված են Եռյակի և նիստի քարտուղարի ստորագրությունները:

Այսպիսով, մեր ձեռքի տակ եղած 1937 թ. նոյեմբեր ամսվա միայն Եռյակի դատական նիստերի ոչ ամբողջական տվյալներով ընդամենը 644

102 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 40, է. 1-34:

103 Տե՛ս նույն տեղում, թ. 36-41: Դրանք ստեղծվել էին 1929 թ. հունիսին ԽՍՀՄ ԺԿԽ-ի որոշմամբ: 1930 թ. ապրիլից ստեղծվեց այդ ճամբարների կառավարման վարչություն (ԳՈՒԼԱԳ): ԳՈՒԼԱԳ-ները վերածվեցին մի հսկայական տնտեսության, ուր աշխատում էին հարյուր հազարավոր բռնադատված քարոյալներ: Նրանց աշխատանքի վայրերն էին ԲԱՄ-ը, Վորկուտան, Կոլիման, Նորիլսկը, Բելամոր-Բայթիկան և այլուր:

104 Տե՛ս նույն տեղում, թ. 43-48:

105 Տե՛ս նույն տեղում, թ. 51-65: Մեկի հանդեպ փաստաթղթում վճիռ չկա, կամ գուցե վրիպակ է:

106 Նույն տեղում, թ. 77-105:

մեղադրյալներից 434-ը դատապարտվել են գնդակահարության, 209-ը՝ 8-ից 10 տարով բանտի կամ արքորի (ՈւՍՃ), մեկ հոգու վերաբերյալ արձանագրությունում եղած վճիռը պարզ չէ: Բերված սույն ամփոփ տվյալները նաև ցույց են տալիս, որ գնդակահարվածները կրկնակիից էլ շատ են, արքորվածները՝ 434-ի դիմաց 209 մարդ:

ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի նիստերի գումարման հաճախականությունը դիտարկելիս նկատել ենք, որ, ըստ անհրաժեշտության, երբեմն մեկ օրում գումարվել է մեկից ավելի նիստ: Ավելին, արձանագրվել է մի դեպք, երբ մեկ օրում՝ 1938 թ. փետրվարի 25-ին՝ դարձյալ Վ. Խվորոստյան, Գ. Արութինով և Ա. Հարությունով, կազմով հրավիրվել է 6 նիստ և լավել ընդհանուր թվով 449 մեղադրական գործ (տե՛ս թիվ 61-61 արձանագրությունները): Դարձյալ Եռյակի նիստերի արձանագրությունների հիման վրա, մեր կատարած ամփոփ հաշվումներով, այդ 6 նիստերում կայացված վճիռներով ընդամենը 449 մեղադրյալներից 291-ը դատապարտվել են գնդակահարության, անձնական գույքի բռնագրավումով, 158-ը՝ 10 տարով բանտարկության: Ընդ որում, 291 գնդակահարվածներից 261-ի վճիռը ներկայացված է քաղաքական բնույթի մեղադրանքներով, իսկ 30-ինը՝ քրեական՝ կողոպուտ, անասնագողություն, սպանություն, կրկնահանցագործություն և այլն¹⁰⁷: Հիշեցնենք, որ սովորաբար քաղաքական և քրեական բնույթի գործերը լավում էին տարբեր նիստերում, բայց և հանդիպում են մեկ նիստում խառը լումներ:

Տեղեկացնենք, որ ավելի ուշ՝ 1938 թ. սեպտեմբերից, արդեն **Հատուկ Եռյակի** գնդակահարության վճիռները սահմանված կարգով ի կատար էին ածվում՝ ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի պետանվտանգության վարչության բանտի պետ Սերգո Պետրոսյանին ուղղված հույժ գաղտնի, միայն անձամբ նշումով, Եռյակի նախագահի (Վ. Խվորոստյանի) ստորագրությամբ հանձնարարականով՝ «Հատուկ Եռյակի կայացրած վճիռը, ներկայացված մեղադրյալների ցուցակով, անհապաղ ի կատար ածել պատժի առավելագույն չափով՝ գնդակահարությամբ» ձևակերպմամբ: Նույն կարճված գործերում ներկայացված են նաև ՆԳԺԿ հինգ պատասխանատու պաշտոնյաների կողմից ստորագրված գնդակահարության իրականացման ակտերը¹⁰⁸: Օրինակ՝ նման ընթացակարգով 1938 թ հոկտեմբերի 4-ին Երևանի բանտում, Նալբանդյան փող. 104, գնդակահարվել են ճանաչված մտավորականներ, գիտնականներ ու գործիչներ՝ Գրիգոր Եվանգուլովը, Գրիգոր Զաղեթյանը, Սենեքերիմ Տեր-Հակոբյանը, Միսակ Խոստիկյանը և այդպես մինչև 35 հոգի¹⁰⁹:

Ահա հակիրճ կերպով մեր կողմից ներկայացված նման ոճրագործությունները: Բերված փաստերը մեզ բավարար հիմք են տալիս՝ եզրակացնելու, որ Հայկոմկուսի ԿԿ-ի 1-ին քարտուղար Գր. Հարությունյանը (Արութինովը) ավելի օրինապահ ու արդարամիտ չի եղել, քան, ասենք, իր նախորդը՝ Ա. Ամատունին: Գր. Հարությունյանի «հայրենասնվեր» գործունեության վերաբերյալ վերը ասվածից բացի, հավելենք նաև այն քստմնելի փաստը, որ նրա ղեկավարած ԿԿ-ի բյուրոյի որոշմամբ և անձամբ իր՝ 1938

107 Տե՛ս նույն տեղում, թ. 107-156:

108 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 42, թ. 2-42:

109 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 46, թ. 1-127 (հաշվումները կատարված են մեր կողմից):

թ. օգոստոսի 4-ի գաղտնի գրությամբ դիմել են «ՀամԿ(բ)Կ ԿԿ՝ ընկեր Ստալինին»՝ առաջարկելով «փակել Էջմիածնի վանքը և լուծարել Կաթողիկոսությունը»: Այդ որոշման կիրառման համար խնդրել են Կենտրոնի թույլտվությունը¹¹⁰: Ահա թե Գր. Հարությունյանը և նրա գլխավորած Հայկոմկուսը ինչպես են արտահայտել իրենց ստորաքարշ նվիրվածությունը մարքս-լենինյան աթեիստական գաղափարներին:

Հիշյալ փաստերը լրացուցիչ անգամ հաստատում են այն միտքը, որ Հայաստանում բռնաճնշումների քաղաքականությունը պայմանավորված չի եղել լավ կամ վատ քարտուղարներով, այլ դա եղել է մարքս-լենինյան ուսմունքով ու ծրագրային հիմնադրույթներով առաջնորդվող ՀամԿ(բ)Կ – ԽՍԿԿ միասնական կուրսը:

1930-ականների քաղաքական հետապնդումներից անմասն չեն մնացել շատ և շատ մտավորականներ, մեզ ծանոթ ու անծանոթ գիտնականներ, համալսարանի դասախոսներ: Բռնաճնշումների այդ մղձավանջի շրջանում գործընկերների, հարևանների և այլ մատնություններով քաղաքական մեղադրանքի կասկածանքով հետաքննության է ենթարկվել պատմաբան, Երևանի համալսարանի դասախոս **Վարդան Պարսամյանը**, սակայն հանցակազմի անբավարարության հիման վրա՝ նրա հանդեպ հետաքննությունը դադարեցվել է, նա ազատ է արձակվել կալանքից, և գործը փակվել է¹¹¹:

Պետհամալսարանի մեկ այլ դասախոս՝ **Հայկ Գյուլիքելյանը**, ձերբակալվել և ՀԽՍՀ քր. օր.-ի 67 հոդվածի 1-ին մասով՝ իբրև թե ընդգրկված է եղել Ն. Ստեփանյանի ղեկավարած աջ-տրոցկիստական կազմակերպությունում: Գործը լսվել է Անդրկովկասի զինվորական տրիբունալի 1939 թ. մարտի 23-ի փակ նիստում: Սահմանվել է 5 տարվա ազատազրկում Ուլդիչ աշխատանքային ձամբարում, որից 2 տարին նա արդեն անցկացրել էր բանտում: Սակայն դատավճիռը բողոքարկվել է ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայում և հարուցված մեղադրանքը ապացուցված չլինելու պատճառով քր. հետապնդումը դադարեցվել է, և Հ. Գյուլիքելյանը ազատ է արձակվել¹¹²:

Շատ ավելի ծանր ավարտ է ունեցել «տրոցկիստ» ճանաչված փիլիսոփա **Հենրի Գաբրիելյանի** մեղադրական գործը: ԽՍՀՄ Գերագույն դատարանի զինվորական կոլեգիայի 1938 թ հուլիսի 20-ի արտագնա, 20 րոպե տևողությամբ, նիստում որոշվել է մեղադրյալ Հ. Գաբրիելյանին (դատարանում նա չի ընդունել իրեն առաջադրված մեղադրանքը) դատապարտել 12 տարվա բանտարկության՝ ամբողջ անձնական գույքի բռնագրավումով: Նա կալանքն անցկացրել է Գ. Նժդեհի բանտային կյանքի պատմությունից մեզ հայտնի Վլադիմիրյան բանտում¹¹³:

1938–1939 թթ. անհիմն մեղադրանքներ են հարուցվել մեծանուն լեզվաբան **Հրաչյա Աճառյանի** դեմ: Նրան մեղադրել են համալսարանում դաշնակցական գաղտնի կազմակերպությանը անդամակցելու, բազում

110 Այդ մասին տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 50, թ. 134–143:

111 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1191, ց. 19, գ. 50, թ. 1–134:

112 Տե՛ս Հարությունյան Գր., կյանքը և գործունեությունը, Եր., 2000, էջ 41–42, տե՛ս նաև **Ղազախեցյան Վ.**, Հայաստանը 1920–1940 թթ., Եր., 2006, էջ 533:

113 Տե՛ս Վ. Պարսամյանի մեղադրական գործը՝ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 4, գ. 155, թ. 1–35:

լեզուների տիրապետելու պատրվակով արտասահմանյան գործակալ լինելու մեջ և այլն: Եվ նման անհիմն ու կեղծ բռնադատություններից ֆիզիկական, հոգևոր ու բարոյական անչափելի տառապանքներ են կրել հայ մտավորականության բազմաթիվ ներկայացուցիչներ:

Կարելի է վստահաբար պնդել, որ տարբեր ձևերով բռնաճնշումների է ենթարկվել կուսակցական-պետական գործիչների 90 տոկոսից ավելին, համենայն դեպս, քչերին կարելի է հանդիպել, որ 1930-ական թթ. այս կամ այն կերպ հարցաքննության ենթարկված չլինի:

Մեծ չափով խորհրդային ռեպրեսիվ մեքենայի մասդացով են անցել հակախորհրդային ու թշնամական որակված նախկին կուսակցությունների և առաջին հերթին ՀՅԳ-ի ներկայացուցիչները: Բռնաճնշումների մանգաղը անցել է նաև գիտական, ստեղծագործական մտավորականության վրայով: Ավելին, որքան էլ զարմանալի լինի, նման հարվածներ է կրել անգամ հասարակ, բանից անտեղյակ քաղաքացին, մինչև իսկ քաղաքականությունից շատ հեռու կիսագրագետ կամ անգրագետ գյուղացին:

Անշուշտ, խորհրդային երկրում, ինչպես որ ցանկացած նոր համակարգում, եղել են վարչակարգի հակառակորդներ, չընդունողներ, բայց դա չէր նշանակում, թե մարդկանց զանգվածաբար պետք էր մեկուսացնել աշխատանքային ճամբարներում կամ էլ ֆիզիկապես վերացնել: Հնարավոր չէ հասարակության մի հատվածի ողբերգության վրա կառուցել մյուսի երջանկությունը:

Քննության առանձին նյութ կարող են լինել ոչ միայն բռնադատվածների, այլև նրանց հարազատների վրա անօրինականությունների, ռեպրեսիաների թողած սոցիալ-հոգեբանական ազդեցությունն ու դրա հետևանքները: Բռնաճնշումներ տեսած ու ապրած հազարավոր ընտանիքների անդամներ, ըստ սեռատարիքային յուրահատկության՝ կրել են անչափելի հոգեկան ցնցումներ, խեղվել է նրանց կյանքն ու ձակատագիրը:

Ջանգվածային բռնաճնշումների փուլում տիրել է մի իրավիճակ, երբ այս կամ այն մարդուն ձերբակալելիս հաճախ նրանց հարազատները տեղյակ չեն եղել նրա գտնվելու վայրից, էլ չենք խոսում՝ ձերբակալման ու կալանավորման պատճառից: Անգամ գնդակահարության ակտը իրականացնելուց հետո էլ՝ բանից անտեղյակ հարազատը դիմել է իրավապահ մարմիններին, պետական բարձրագույն իշխանություններին, նրա որպիսությունից որևէ բան իմանալու, սակայն ձշմարտությունը թաքցրել են: Այսպես, օրինակ՝ բռնադատված նախկին դատավոր, իրավաբան, Ախալքալաքի նախկին գավգործկոմի նախագահ Օսիկ (Հովհաննես) Դուրգարյանի գործի 1954-1955 թթ. կարճման ու արդարացման ընթացքում, այնտեղ հայտնաբերել են նրա կնոջ՝ Օֆելյա Նազարյանի նախկինում գրված բազմաթիվ նամակները՝ ուղղված իրավապահ, անգամ պետական բարձրագույն մարմիններին այն մասին, թե որտեղ է ձերբակալված իր ամուսինը՝ կենդանի է, թե՛ մահացած: Նրան, ինչպես որ հազարավոր նման ձակատագիր ունեցող քաղաքացիների ընդունված ստանդարտով պատասխանել են, որ նա «աքտորվել է հեռավոր ճամբար՝ առանց նամակագրության իրավունքի»¹⁴: Օ. Նազարյանը վերջին անգամ (1954 թ.) դիմել

114 Տե՛ս Հայկ Գյուլիքսյանի մեղադրական գործը՝ ՀԱԱ, ֆ. 1191, ց. 10, գ. 2044, թ. 1-182:

էր ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահ Կ. Վորոշիլովին, բայց՝ անարդյունք: Պարզվում է՝ ամուսինը 1938 թ. հուլիսի 18-ին գնդակահարված է եղել: Եվ 17 տարի շարունակ նա ոչ մի տեղեկություն չի ունեցել ամուսնու մասին:

Գիտական շրջանառության մեջ դրված՝ կարճված ու գաղտնազերծված արխիվային վավերագրերի ու նյութերի՝ ներկայիս իրողությունների լույսի տակ մեր կատարած քննական դիտարկումներով ահա այսպիսին է 1930-ական թթ. խորհրդային պետությանը ճարակած՝ մարդկային ու քաղաքական աղետի՝ ստալինյան բռնաճնշումների իրական ու անաչառ պատմությունը, որը ուսանելի փորձ ու դաս պետք է լինի ինչպես բռնակալական հակումներ ունեցող իշխանավորների, այնպես էլ ժողովրդավարական երկրների, քաղաքացիական հասարակության, ներկա և ապագա սերունդների համար:

Ամփոփում

Ութ տասնամյակների հեռվից դիտարկելով 1930-ական թվականների խորհրդային բռնաճնշումների պատմությունը՝ հանգել ենք հետևյալ եզրահանգումներին.

1. Խորհրդային երկիրը, այդ թվում՝ նաև Հայաստանը պատուհասած բռնաճնշումների (ռեպրեսիաների) քաղաքականությունը պայմանավորված չի եղել միայն այս կամ այն անձով, նրա բնավորությամբ կամ դաժանությամբ: Պետության ղեկին Ստալինը կլիներ, թե մեկ այլ ուրիշը, ավելի կամ պակաս չափով պիտի տեղի ունենային բռնությունները: Դա պետք է բացատրել կոմունիստական-բոլշևիկյան կուսակցության գաղափարախոսությամբ, որդեգրած ծրագրերով ու քաղաքականությամբ, պրոլետարիատի դիկտատուրա անունը ստացած ամբողջատիրական (տոտալիտար) համակարգով:

2. Խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ, այլ հրապարակումներում ռեպրեսիաների ամբողջ մեղքը բարդվել է միայն Ստալինի վրա, որպեսզի նման ձևով փրկեն ԽՄԿԿ վարքն ու հեղինակությունը: Այնինչ՝ Ստալինը հետևողականորեն վարել է լենինյան կուրսը, կուսակցության ծրագրերը՝ սոցիալիզմի ու կոմունիզմի կառուցման վերաբերյալ:

3. Ռուսաստանում քաղաքական բռնություններն ունեցել են պատմական խոր ակունքներ: Ցարական-ինքնակալական Ռուսաստանի անցյալը իր դրոշմն է թողել նրա իրավահաջորդ Խորհրդային Ռուսաստանի բռնատիրական բնույթի վրա:

4. ԽՍՀՄ փլուզումը և կոմունիստական ամբողջատիրության վերացումը, երկրի ազատականացումը, փակ արխիվների գաղտնազերծումը լայն հնարավորություններ բացեցին խորհրդային պետության պատմության այսպես կոչված «սև» և «սպիտակ» էջերի, այդ թվում նաև բռնաճնշումների ուսումնասիրման և վերհանման համար: Նորանկախ Հայաստանում ևս որոշ աշխատանքներ կատարվեցին այդ ուղղությամբ: Սակայն մեզանում քաղաքական նկատառումներով, այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով, արձագանքը ռեպրեսիաների թեմային համեմատաբար թույլ արտահայտվեց:

5. Բռնաճնշումները գործադրվել են տարբեր հաճախականությամբ ու փուլերով, որի բարձրակետը համարվում է 1937 թվականը: Ստալինի մահից հետո արտաքին ու ներքին փոփոխված իրադրության պայմաններում փոխվեցին նաև քաղաքական հետապնդումների ձևերն ու մեթոդները, դրանք դարձան ավելի մեղմ ու քողարկված:

6. Հենվելով դասակարգային պայքարի սրվելու մասին ստալինյան կեղծ տեսադրույթի վրա՝ կուսակցական-պետական մարմինները բռնաճնշումները գործադրելու նպատակով կենտրոնում և տեղերում ձևավորեցին հասարակական-քաղաքական անվտանգության, վախի ու մատնությունների մթնոլորտ, որի պայմաններում էլ կատարվեց մարդատրսը՝ անկախ դիրքից, պաշտոնից, սոցիալական ծագումից և այլն: Այդ ամենի նպատակն էր իրար մատնելով, գրպարտելով, մատնագրեր գրելով իբր թե բացահայտել ժողովրդի ու դասակարգային թշնամիներին, ձերբակալել ու ոչնչացնել նրանց և այդպիսով ձանապարհի հարթել սոցիալիզմի հաղթանակի համար:

7. Հիմնականում կեղծ ցուցմունքների հիման վրա, հարցաքննությունների ընթացքում գործադրված խոշտանգումներով, հաճախ մեղադրյալների ստորագրությունները կեղծելով և այլ միջոցներով կորզվել են «ինքնախոստովանություններ», կազմվել ոչնչով չհիմնավորված մեղադրական գործեր, դատական եզրակացություններ և հիմնականում զին. տրիբունալների ու Եռյակների միջոցով 15-20 բուպե տևողությամբ դատական ներկայացում բեմադրելով՝ կայացվել են անհիմն ու անապացույց վճիռներ՝ մարդկանց լինել-չլինելու վերաբերյալ:

8. Ներկայումս հրապարակի վրա եղած տվյալներով 1920-1953 թթ. Խորհրդային Հայաստանում բռնադատվածների ընդհանուր թիվը կազմել է սոտավորապես 42 հազար մարդ, որոնց մի մասը դատապարտվել է 1-ին կատեգորիայով՝ գնդակահարության, մյուսները՝ 2-րդ կատեգորիայով՝ բանտ-աքսորի և այլն:

9. ԱԱՆ-ՊԱԿ-ի արխիվի կարճված հազարավոր գործերի մեր դիտարկումները ցույց են տալիս, որ 1930-ական թթ. Հայաստանում չի եղել քր. գործերում շարունակ շրջանառվող և անընդհատ կրկնվող քաղաքական բնույթի հակախորհրդային, հակապետական, տրոցկիստական, դաշնակցական, ազգայնական և այլ խումբ կամ կազմակերպություն: Իրականությունն այն է, որ մեզանում պարզապես եղել են ազգային նկարագիր ունեցող առանձին գործիչներ ու մտավորականներ, որոնք նեղ շրջանակներում խոսել են Հայաստանին ու հայ ժողովրդին հուզող խնդիրներից և ցանկություն են հայտնել, որ Հայաստանին միացվեն նրանից անարդարացի կերպով բռնազավթված հողերը՝ Կարսը, Լեռնային Ղարաբաղը, Սուրմալուն, Նախիջևանը, Ախալքալաքը և այլն:

10. Եվ, վերջապես, քաղաքական բռնաճնշումների՝ զավեշտ հիշեցնող դրսևորումներից մեկն էլ եղել է այն, որ ձերբակալությունների, գնդակահարությունների, բանտ-աքսորի ենթակաների խմբաքանակները վերևից՝ Կենտրոնից (Մոսկվայից), նախապես լիմիտավորվել են ըստ հանրապետությունների ու մարզերի: Եվ Հայաստանի համար ներկայացված առաջադրանքները միշտ գերակատարվել են:

Քաղաքական բռնաճնշումների (մեծ ռեպրեսիաների) 8 տասնամյակի հեռվից ներկայացվող սույն քննական դիտարկման նպատակը ոչ միայն պատմական հիշողության վերականգնումն է, այլևս մարդկային հարգանքի տուրքն ու խոնարհումը հազարավոր անմեղ բռնադատվածների հիշատակին: Պատմության այս դառը դասը ուղեցույց է վախից, ստիգ, կեղծիքից ու մատնություններից հեռու բոլոր սերունդների համար՝ որպես ազատ, արդար և ճշմարիտ ապրելու պատգամ:

Արարատ Մ. Հակոբյան – գիտական հետաքրքրություններն ընդգրկում են 20-րդ դարի Հայոց պատմության առանցքային հիմնահարցերը: Հրատարակել է միջարքարժեքավոր մենագրություններ Հայաստանի առաջին հանրապետության պատմության մասին: Ուշագրավ են նաև հեղինակի աշխատություններն ու հոդվածները՝ Փետրվարյան ապստամբության և ընդհանրապես՝ Խորհրդային Հայաստանում մենատիրական վարչակարգի հաստատման նախնական ժամանակաշրջանի՝ 1920-ական թվականների վերաբերյալ:

Summary

ARMENIA IN 1937

Critical observations on the occasion of the 80th anniversary of political repressions

Ararat M. Hakobyan

Key words – repression, J. Stalin, fear, interrogation, A. Khanjyan, treachery, trial, prison, A. Amatuni, Dashnak, anti-revolutionary, investigator, Troika, military tribunal, execution.

The collapse of the Soviet regime in 1991 put an end to the monopoly of the CPSU in the territory of the former USSR. Certain conditions were created in the post-Soviet space for the reassessment of certain pages of history. One of the similar periods in USSR, including Armenia, were the repressions of 1937.

We, as well as many researchers are convinced that the policy of repressions was not due solely to Stalin's personality, his character and cruelty, but proceeded from the Marxist-Leninist doctrine, from the ideological foundations of the Communist Party, as according to their vision all anti-revolutionary, Trotskyist and other so-called «ideologically antagonistic» elements had to be eliminated so that the true communist society could be formed in the Soviet Union and, if possible, in the whole world.

The unique and difficult past of the historical and political development of tsarist Russia also left a mark on the dictatorial character of Soviet power, the successor to autocratic Russia.

The repressive policy was applied practically from the first days of the So-

viet power, it lasted in the following decades, and the peak of the repressions was in 1937.

In the mid-1950s, when criticism of the cult of personality began, the blame for repressions was unilaterally imposed only on Stalin. This was done in order to somehow save the reputation of the CPSU. It is also obvious that other leaders involved in this black case, tried to avoid personal responsibility. The reality is that Stalin adhered and consistently followed the Leninist course, while other leaders, out of fear or out of conviction, approved of his policy.

After Stalin's death (1953), the repressions were greatly reduced. As a result of changes in the international and domestic situation, repressions took a more hidden and mild form, the methods of violence and persecutions changed.

Based on the false position of further aggravation of the class struggle, the party-state bodies formed an unhealthy socio-political atmosphere of distrust, fear and betrayal, in order to put pressure on people. In consequence of this policy, people often reported to each other without any grounds to expose the so-called «enemies of the people».

Mostly through false testimony, torture during interrogations, falsification of signatures and other methods, «confessions» were often extorted, groundless accusations, court judgments were made. Judicial proceedings lasted only 15-20 minutes and military tribunals or Trojkas sentenced thousands of innocent people to 1 category (execution) and the second category (prison and exile).

According to available data, in 1920-1953 the total number of repressed people in Armenia was about 42,000. The most absurd is that the authorities of Soviet Armenia periodically received from Moscow a concrete plan on how many «enemies of the people» they should expose, and the Armenian government has always exceeded its plan to emphasize its adherence to the ideas of Marxism-Leninism and socialism. Planning the economy for the Soviet system can be understandable, but the fact that even the human life was planned, proves that the system was dictatorial.

Our observations of a thousand terminated and declassified court cases in the fund 1191 of the Armenian National Archive show that in the 1930s there were no political or anti-Soviet, terrorist, Trotskyist, Dashnak and nationalist groups and organizations in Armenia. The reality is that there were some individuals, writers and intellectuals in Armenia, who were concerned by the problems facing their country and the Armenian people, so they expressed a desire that the unjustly occupied lands of Armenia, such as Kars, Karabakh, Surmalinsky district, Nakhchivan and others were returned to Armenia.

80 years after political repressions, our observations allow not only to restore the historical reality and pay tribute to thousands of innocent victims, but also provide an instructive lesson for those who have dictatorial tendencies and send a message to democratic states and civil society so that they live and never forget about freedom and justice.

1937 ГОД В АРМЕНИИ

Критические заметки по случаю 80-летия политических репрессий

Арагат М. Акопян

Ключевые слова – репрессии, И. Сталин, страх, допрос, А. Ханджян, предательство, судебное разбирательство, тюрьма, А. Амагуни, дашнакский, антиреволюционный, следователь, Тройка, военный трибунал, расстрел.

Крах советского режима в 1991 году положил конец монополии КПСС на территории бывшего СССР. На постсоветском пространстве были созданы определенные условия для переоценки некоторых страниц истории. Одной из подобных страниц советского периода были репрессии 1937 года, в том числе в Армении.

Мы, а также многие исследователи убеждены в том, что политика репрессий не была обусловлена только личностью Сталина, его характером и жестокостью, а исходило из марксистско-ленинского учения, из идеологических основ коммунистической партии, и была обусловлена тем, что согласно их видению, по пути к социализму и коммунизму все антиреволюционные, троцкистские и другие так называемые «идейно-антагонистические» элементы должны были быть ликвидированы, с тем чтобы в Советском Союзе и, по возможности во всем мире было создано глобальное социалистическое и коммунистическое общество.

Уникальное и трудное прошлое исторического и политического развития царской России также оставило некий отпечаток на диктаторском характере советского России – преемнике самодержавной России.

Репрессивная политика была применена практически с первых дней советской власти, она продолжалась в последующие десятилетия, а пиком репрессий стал 1937 год.

В середине 1950-х, когда началась критика культа личности, вину репрессий в одностороннем порядке взвалили только на Сталина. Это было сделано с тем чтобы каким-то образом спасти репутацию КПСС. Также очевидно, что другие лидеры, участвующие в этом черном деле, пытались избежать личной ответственности. Реальность такова, что Сталин придерживался и последовательно шел по ленинскому курсу, а другие лидеры, из страха или из убеждений одобряли его политику.

После смерти Сталина (1953) репрессии сильно уменьшились. В результате изменений в международной и внутренней ситуации репрессии стали проявляться в более скрытой и мягкой форме, изменились методы насилия и преследований.

Основываясь на фальшивом положении дальнейшего обострения классов-

вой борьбы, партийно-государственные органы сформировали нездоровую общественно-политическую атмосферу недоверия, страха и предательств, чтобы оказать давление на людей. В следствии данной политики, люди часто без каких либо оснований доносили друг на друга, с тем чтобы разоблачить так называемых «врагов народа».

В основном с помощью ложных показаний, пыток во время допросов, фальсификации подписей и другими способами часто вымогались «признания», составлялись необоснованные обвинения, судебные заключения, а судебные процессы длились всего 15–20 минут и военные трибуналы или Тройки приговаривали тысячи невинных людей по 1-ой категории (расстрел) и по второй категории (тюрьма и ссылка).

Согласно имеющимся данным, в 1920–1953 гг. общее число репрессированных в Армении составляло около 42 000 человек. Самое абсурдное в том, что власти Советской Армении периодически получали из Центра, то есть из Москвы, конкретный план на то, сколько «врагов народа» они должны разоблачить, а армянское правительство всегда перевыполняло план чтобы подчеркнуть свою приверженность идеям марксизма-ленинизма и социализма. Планирование экономики для советской системы понятно, но тот факт, что планировалась человеческая жизнь, говорит только о том, что система была диктаторской.

Наши наблюдения тысяч прекращенных и рассекреченных судебных дел в фонде 1191 Армянского национального архива показывают, что в 1930-х годах в Армении не было антисоветских, террористических, троцкистских, дашнакских и националистических групп и организаций. Реальность такова, что среди армян были отдельные фигуры, интеллектуалы, писатели и т.д., которые в узких кругах говорили о проблемах, стоящих перед Арменией и армянским народом, и выразили желание, чтоб Армении были возвращены несправедливо оккупированные земли – Карс, Карабах, Сурмалинский уезд, Нахичевань и так далее.

Через 80 лет после политических репрессий, наши наблюдения позволяют не только восстановить историческую реальность и отдать дань памяти тысячам невинных жертв, но также являются поучительным уроком для тех, у кого есть диктаторские тенденции и посланием демократическим государствам и гражданскому обществу, с тем чтоб они не забывали о свободе и справедливости.

ՀԻՄՆԱԿ

ԹՎ ՄԻՆԻՍԿԻ ԳՐԱԴԱՐԱՆ, ԵՐԵՎԱՆ, 2017

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ